




Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2356

Լ. ԴԱՎԼՈՎԻՉ

ԼԵՆԻՆԸ

3 Ե Կ

ԱԶԳԱՅԻՆ ՇԱՐՑԸ

Հ. Ս. Խ. Հ

1976 ՏՆՐԱՏՕ/
ՄՈՍԿՎԱ

3K24

7-27

3524

7-27

03 JUN 200

12.0 NOV 2008
3

№

ԼԵՆԻՆՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Մ. ՊԱՎԼՈՎԻՉ

ԼԵՆԻՆԸ

ՅԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԸ



Հ. Ս. Խ. Հ. ՊԵՏԼՅԱՆ ՀՐԱՑԱՐԵԿՉՈՒԹՅՈՒՆ

№ 135

ՄՈՍԿՎԱ

1924



17 JUL 2013

2356

Արտատպւած ծ ~~ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԹԱՆՈՒՅԻՆ~~ Ա. ԿԱՐԻՆՅԱՆԻ
~~ԿՐԹԱՆՈՒՅԻՆ~~ խմբագրութեամբ
հրատարակւած «ԼԵՆԻՆ» Ժողովածուից:

64625-67



18625-531

ԼԵՆԻՆԸ ՅԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԿԱՐՅԸ

Համաշխարհային սոցիալիստական շարժման
և միջազգային կոմունիստական կուսակցութեան
Լենինի մատուցած ամենամեծ ծառայութիւն-
ներից մեկն էլ նրա ճիշտ առաջադրումն է
այնքան մի բարդ հարցի, վորպիսին ազգային
հարցն է, վորից գլուխ չհանեցին մինչեւ իսկ
Ռոզա Լյուքսեմբուրգի նման տեսական ու-
ժեղ մտածողներ: Մինչդեռ, ընկեր Զինով-
յեվը Լենինգրադում լույս տեսնող «Յեռ-
դա» թերթի 1 համարում տպւած Լենինի հոդ-
ւածի առթիւ (մի հոդւած, վոր նա գրել է
1916 թվին) գրած իր առաջաբանի մեջ հիմնա-
վորապէս ցույց է տալիս, վոր մեր կուսակ-
ցութեան ճիշտ քաղաքական ու-
թյունն ազգային հարցի ասպարիզում,
— այս բանը համարձակ և առանց չափազանցու-
թեան կարելի չէ անել, — գլուխ ցրեց մեր
հաղթութիւնը եսերներին և մենչե-

վիկնեբրի, Դենիկիսի ու Կոլչակի վրա
առնվազն 50%-ով:

1. Լենինը Յեվ Միխայիլովիչին

Առաջին անգամ ընկ. Լենինի աշխատութ-
յունները մեջ ազգի, ազգութան, ազգային
կապերի մասին հիշատակության ենք հանդիպում
նորերս լույս տեսած նրա «Ուլքեր են ժողովըր-
դի բարեկամները և ինչպես են նրանք կոչվում
սոցիալ-դեմոկրատների դեմ» գրվածքի մեջ:
(հրատ. Московский рабочий* և «Новая Мос-
ква»-ի 1923 թ.), մի աշխատություն, վոր գրված
է յերեսուն տարի առաջ՝ 1894 թ. ապրելին և
այն ժամանակվանից ընկած է յեղել պահնորդա-
կան բաժինների գաղտնարաններում:

Այդ նշանավոր աշխատությունը ուղղված
է այն ժամանակվա նարոդնիկության գլխավոր
գործիչների դեմ— Միխայիլովսկու¹⁾, Յուժակովի²⁾,
Կրիվենկոյի³⁾, Նիկոլայ-ոնի⁴⁾, վորոնք «Русское
Богатство»⁵⁾ հանդեսի մեջ ապված մի ամբողջ
շարք չարամիտ և գռեհիկ հոդվածներում ան-
խնա կերպով խեղաթյուրում էյին ռուսական
մարքսիզմի հայացքները:

Պատմական մատերիալիզմը քննադատելիս
Միխայիլովսկին ի միջի այլոց շոշափել է Ենգել-

սի «Ընտանիքի, մասնավոր սեփականության ու
պետության ծագումը» աշխատությունը: Միխայ-
լովսկին ազգային կապերը տոհմային կապերի
շարունակություն ու ընդհանրացում եր համա-
րում և քննում եր ազգային զգացումն իբրեւ
ինքնուրույն գործոն, նման սեռային զգացման:
Այս դիտողության առթիվ, վորը ցույց է տա-
լիս, թե հասարակական յերեվոյթները ըմբո-
նման բնագավառում ինչ պրոֆաններ էյին մին-
չեւ անգամ ամենաաչքի ընկնող նարոդնիկ գրո-
ղները, ընկ. Լենինը հետեւյալն է ասում.—

«Պ. Միխայիլովսկին մի ցուցմունք էլ ունի,
դա դարձյալ յուրատեսակ մի գոհար է: «Ինչ վե-
րաբերում է տոհմային կապերին,—շարունակում
է նա շտկել մատերիալիզմը,—ապա նրանք դալ-
կացան քաղաքակիրթ ժողովուրդների պատմու-
թյան մեջ, մասամբ իսկապես արտադրության
ձեւերի ազդեցության ճառագայթների ներքո (նո-
րից՝ աչքակապություն, սակայն ավելի աշկարա:
Արտադրության հատկապես ինչ ձեւերի մասին
է խոսքը. դատարկ ֆրազ), բայց մասամբ և լուծվե-
ցին իրենց սեփական շարունակության ու ընդ-
հանրացման—ազգային կապերի մեջ»: Այսպի-
սով, ազգային կապերը տոհմային կապերի շա-
րունակություն ու ընդհանրացում են: Ըստ յե-
րեվոյթին պ. Միխայիլովսկին հասարակության

մասին ունեցած իր պատկերացումները վերցնում ե այն յերեխայական հեքյաթից, վոր գիմնազիականներին են սովորեցնում: «Հասարակության պատմությունը,—բառաբանում ե այդ հեքյաթը,—ցույց ե տալիս, վոր սկզբում ընտանիքը՝ յուրաքանչյուր հասարակության այդ բնիքն ե գոյութիւն ունեցել—(սա գուտ բուրժուական գաղափար ե, բաժան-բաժան մանր ընտանիքները իշխող դարձան միայն բուրժուական ռեժիմի որով. մինչ պատմական ժամանակներում նրանք բոլորովին գոյութիւն չունեցին: Բուրժուայի համար չկա ավելի բնորոշ բան, քան արդի կարգերի հատկանիշ գծերի վերագրումը բոլոր ժամանակներին և ժողովուրդներին), հետո, իբր թե, ընտանիքը աճեց և ընդարձակվեց ու ցեղ դարձավ, իսկ ցեղն ել՝ պետութիւն: Յեթե պ. Միխայլովսկին լուրջ տեսքով կրկնում ե այս մանկամիտ անհեթեթութիւնը, ապա դա այլ բաներից զատ ապացուցում ե և այն, վոր նա ամենաչնչին պատկերացումն անգամ չունի թեկուդ հենց ռուսական պատմության ընթացքի մասին: Յեթե կարելի չե հին Ռուսաստանի տոհմային կենցաղի մասին խոսել, ապա, անկասկած ե, վոր արդեն իսկ միջին դարերում, մոսկովյան տիրապետության ժամանակաշրջանում, տոհմային և վոչ մի կապ

գոյութիւն չուներ, այսինքն՝ պետութիւնն ամենավին ցեղային կապերի վրա չեր հիմնված, այլ տեղական կապերի վրա: Կալվածատերերն սււլանքերը տեղ եյին տալիս այլեւայլ վայրերից իրենց մոտ յեկած գյուղացիներին, և այս կերպ կազմվող համայնքները գուտ տերիտորիալ միութիւններ եյին: Իսկ թե աս ժամանակ բառիս բուն իմաստով ազգային կապեր են գոյութիւն ունեցել—հազիվ թե այդ մասին կարելի լիներ խոսել. պետութիւնը բաժան-բաժան եր յեղած առանձին հողամասերի, մասամբ մինչև իսկ իշխանութիւնների, վորոնք պահպանում եյին նախկին ինքնավարության կենդանի հետքերը, վարչության առանձնահատկութիւնները — հաճախ իրենց հատուկ գործերը (տեղային բոյարները⁶⁾ պատերազմի եյին դուրս գալիս իրենց գնդերով) մաքսային հատուկ սահմանները և այլ: Ռուսական պատմության նոր շրջանն ե միայն (մոտավորապես XVII դարից սկսած), վոր բնորոշվում ե բոլորնման հողերի և իշխանութիւնների փաստական ի մի ձուլմամբ: Յեղային կապերը չեյին, վոր առաջացել եյին այդ ձուլումը, հարգելի պ. Միխայլովսկի, և վո՛չ ել նրանց շարունակութիւնն ու ընդհանրացումը, այլ այդ շրջանների մեջ ուժեղացող փոխանակութիւնը, հետզհետե աճող տարանջային շրջանառութիւնը, ցե-



դային մասնը շուկաների համառուսական մի շուկայի մեջ կենդրոնանալն եր, վոր առաջ եր բերում այդ ձուլումը: Վորովհետեւ այդ պրոցեսի ղեկավարներն ու տերերը կապիտալիստ-վաճառականներն էին, ուստի ազգային այդ կապերի ստեղծումն ել վոչ այլ ինչ եր, յետեւ վոչ բուրժուական կապերի ստեղծումը*):

Իր այդ յերկու փաստական ցուցումներով ա. Միխայլովսկին միայն ինքն իրեն ջախջախեց և բացի բուրժուական գոեհեղեթյան որինակներից մեզ վոչինչ չտվեց, գոեհեղեթյուն եմ ասում նրա համար, վոր նա ժառանգության ինստիտուտը յերեխաների արտադրությամբ և նրա պսիխիկայով եր բացատրում, իսկ ազգությունը՝ տոհմային կապերով. «բուրժուական» եմ ասում նրա համար, վոր պատմականորեն մի վորոշ հասարակական ֆորմացիայի (հիմնված փոխանակության վրա) կատեգորիաներն ու վերնաշենքերը նա ընդունում եր, վորպես նույնքան ընդհանուր և համընդհանր կատեգորիաներ, ինչպես մանուկների դաստյարակությունն ու «անմիջականորեն» սեռային կապերը»:

Շարունակության մեջ քննադատելով Մի-

*) Ընդգծումը մերն ե, Մ. Պ.

խայլովսկուն, Լենինը մասնացույց ե անում, վոր ազգային թշնամանքի, ազգային ատելության հիմքում առեւտրական և արդյունաբերական բուրժուազիայի ռեալ շահերն են գտնվում,—և վոր խոսել ազգային զգացումի մասին վորպես ինքնուրույն գործոնի, ինչպես այդ Միխայլովսկին ե անում, նշանակում ե գործի ելությունը միայն շարել: Միխայլովսկին վոչ մի կերպ չի կարողանում հասկանալ այն պարզ ճշմարտությունը,—գրում ե Լենինը մեր հիշած աշխատության մեջ,—վոր ազգային ատելության դեմ մղվող պայքարի համար այլ միջոց չկա, քան յուրաքանչյուր առանձին յերկրում ճնշված դասակարգի կազմակերպությունն ու միությունը ճնշող դասակարգերի դեմ պայքար մղելու համար, քան՝ այդպիսի ազգային բանվորական կազմակերպությունների միացումը մեկ բանակի մեջ ընդդեմ միջազգային կապիտալի:

Այս թուուցիկ տողերից արդեն յերեվում ե, թե յերեսուն տարի առաջ ընկ. Լենինն ինչ նշանակություն եր տալիս ազգային հարցին:

2. Կ. ՄԱՐՔՍԸ ՅԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԸ

Ազգային հարցը ընդհանուր կերպով, այսպես ասած դեկլարատիվ ձևով, ընկ. Լենինը

առաջադրել է «Բանվոր դասակարգն ու ազգային հարցը» հոդվածում, տպված՝ «Правда»-ի 1913 թ. մայիս 18-ի համարում (տես Յերկերի ժողովածու, հ. XIX, էջ 28—29)։

Իր այս հոդվածում ընկ. Լենինը ի միջի այլոց հետևյալն է ասում.

«Ազգային հարցը բոլոր գիտակից բանվորներից պահանջում է պարզ ըմբռնում և լուծում։

«Յերբ բուրժուազիան ժողովրդի ու աշխատավորների հետ միասին պայքարում եր ազատության համար, նա ազգերի լիակատար ազատություն ու լրիվ իրավահավասարություն եր պաշտպանում։ Առաջավոր յերկրներ՝ Զվիցերիան, Բելգիան, Նորվեգիան և ուրիշները մեզ ուրինակ են տալիս, թե ինչպես ազատ ազգերը իսկական դեմոկրատիկ կարգերի ժամանակ հաշտ ապրում են միասին և կամ խաղաղ բաժանվում միմիանցից։

«Այժմ բուրժուազիան վախենում է բանվորներից, դաշն է վնասում Պուրիշկեվիչների¹⁾, ռեակցիայի հետ, դավաճանում է դեմոկրատիզմին, պաշտպանում է ազգերի ճնշումը, կամ անիրավահավասարությունը և ազգայնական լուգունգներով ալլապեռում է բանվորներին։

«Մեր ուրերին միայն պրոլետարիատն է, վոր պաշտպանում է ազգերի իսկական ազատությունն ու բոլոր ազգերի բանվորների միյությունը։

«Վորպեսզի զանազան ազգերը ազատ ու խաղաղ ապրեն միասին և կամ իրարից բաժանվեն, (յերբ այդ հարմար է նրանց) զանազան պետություններ կազմելիս, այս բանի համար անհրաժեշտ է լրիվ դեմոկրատիզմ, վոր պաշտպանվում է բանվոր դասակարգի կողմից։ Վո՛չ մի արտոնություն և վո՛չ մի ազգի ու լեզվի համար, ազգային փոքրամասնությունների նկատմամբ։ Վո՛չ մի ամենափոքր ճնշում ու ամենափոքր անարդարություն ազգային փոքրամասնության նկատմամբ,— ահա բանվորական դեմոկրատիայի սկզբունքները։

Ինքնըստինքյան հասկանալի յե, վոր պաշտպանելով ազգերի լիակատար ազատությունն ու լրիվ իրավահավասարությունը, Լենինը յեղնում եր վո՛չ թե արդարության և «մարդասիրության» դրդումներից դեպի ճնշված ժողովուրդները, այլ ամենից առաջ նա յեղնում եր պրոլետարիատի և համաշխարհային հեղափոխության շահերից։

Բանակուլի մեջ մտնելով Ռոզա Լյուքսեմբուրգի հետ ազգերի ինքնորոշման իրավունքի հարցի մասին, Լենինը մատնանշում է Մարքսին, վորը դեռ 1869 թվին ապացուցում եր, վոր անգլիական բանվոր դասակարգի անմիջական ու բացարձակ շահը պահանջում է, վոր նա խզի իր կապը Իրլանդիայի հետ։ Դ ժ բ ա խ տ ու թ յ ու ն

ե մի ժողովրդի համար, յեթե նա ստըրկացրել ե մի այլ ժողովուրդ: Անգլիայի բանվոր դասակարգը չի ազատագրվի, մինչեւ վրլանդիան չազատագրվի անգլիական լծից: Ռեակցիան Անգլիայում ամրապնդում ու սնում ե իրլանդիայի ստրկացումը:

1869 թվի դեկտեմբերի 10-ին Մարքսը գրում ե Ենգելսին, թե իրլանդական հարցին նվիրված իր գեկուցումը Խոտերնացիոնալի Սորհրդում հետեւյալ կերպ կազմված կլինի (Н. Ленин, Собрание сочинений т. XIX, к. 2 138):

«Միանգամայն անկախ ամեն տեսակ «Խոտերնացիոնալ» և «հումանիտար» ֆրազներից, վորոնք խոսում են արդարության մասին՝ իրլանդիայի նկատմամբ,—քանի վոր դա Խոտերնացիոնալի Սորհրդում ինքնըստինքյան հասկանալի չե,—անգլիական բանվոր դասակարգի ուղղակի և բացարձակ շահը պահանջում ե, վոր խզվի նրա այժմյան կապը իրլանդիայի հետ: Այս ե իմ խորին համոզումը, վորն այնպիսի պատճառների վրա յե հիմնված, վորոնք մասամբ չեմ կարող բանալ իրենց՝ անգլիական բանվորներին: Յեա յերկար մտածեցի այն մասին, թե հնարավոր ե արդյոք իրլանդական ռեֆորմ տապալել անգլիական բանվոր դասակարգի ապստամբու-

թեամբ: Այս հայացքը յես միշտ պաշտպանել եմ «Նյու-Յորքյան Տրիբունա»-ի մեջ (ամերիկական որաթերթ, վորին Մարքսը յերկար ժամանակ աշխատակցում եր): Հարցի ավելի խոր ուսումնասիրությունն ինձ համոզեց հակառակի մեջ: Անգլիական բանվոր դասակարգը վոչինչ չի կարող անել, մինչեւ վոր նա չի ազատվի իրլանդիայից: Անգլիական ռեակցիայի արմատը գրտնըվում ե իրլանդիայի ստրկացման մեջ (ընդեծումը Մարքսինն ե):

Պարզաբանելով Մարքսի տեսակետը իրլանդական հարցի նկատմամբ, Լենինը գրում ե («Ուտոպիստ Կարլ Մարքսը և գործնական Ռոզա Լյուքսեմբուրգը») այն նույն հոգվածի մեջ:

Իրլանդական հարցում Մարքսը և Ենգելսը վարում եյին պրոլետարական քաղաքականություն, վորը իսկապես դաստյարակում եր մասսաները դեմոկրատիզմի և սոցիալիզմի վոգոմ, միայն այդ քաղաքականությունն եր ընդունակ ազատել և իրլանդիան և Անգլիան անհրաժեշտ բարեփոխումների կիսադաբային հապաղումից և այդ բարեփոխումները լիբերալների կողմից այլանդակվելուց ի հաճություն ռեակցիայի:

«Մարքսի և Ենգելսի քաղաքականությունը իրլանդական հարցում տվեց մեծագույն, մինչ այժմ հակայական գործնական նշանակություն

պահպանած որինակն այն բանի, թե ինչպես պետք է վերաբերվի ճնշող ազգերի պրոլետարիատը ազգային շարժումներին. այդ քաղաքականությունը նախազգուշացում տվեց ընդդեմ այն «ստորաքարշ փոխկոտուլթյան», վորով բոլոր յերկրներ, գույների և լեզուների քաղքենիներն շտապում են «ուստպիական» համարել սահմանների փոփոխությունը պետությունների, վորոնք ստեղծված են մի ազգի կալվածատերերի ու բուրժուազիայի բռնություններով:

«Յեթե միայն իրլանդական և անգլիական պրոլետարիատը չընդունեյին Մարքսի քաղաքականությունը և իրենց լոգունգ չդարձնեյին — իրլանդիայի անջատումը, ապա դա նրանց կողմից կլիներ ամենաչար ոպորտունիզմը, մոռացումը դեմոկրատի և սոցիալիստի խնդիրների ու զիջում՝ անգլիական բուրժուազիային և ռեակցիային»:

3. Ռ. Ս.-Դ. Բ. Կ. ԾՐԱԳՐԻ ԶՐԴ ՊԱՐԱԳՐԱՅԸ ՅԵՎ ՌՈԶԱ ԼՅՈՒՔՍԵՄԲՈՒՐԳԸ

Ինչպես վերը մեջ բերված հոդվածի վերնագրից ենք տեսնում, Լենինը հենվում է Մարքսի վրա բանակոխվ մղելիս Ռոզա Լյուքսեմբուրգի դեմ, վորը Լենսատանի անկախությունը ուստպիա յեր համարում և հեգնորեն բացական-

չում. — «Ինչո՞ւ և իրլանդիայի անկախություն պահանջը չառաջադրել»:

Ռուսական մարքսիստների ծրագրի 9-րդ պարագրաֆը, վորն ազգերի ինքնորոշման իրավունքի մասին է խոսում, ինչպես Լենինն երգրում, առաջ բերեց մի ամբողջ արշավանք ոպորտունիստների, վորոնք իրենց արգումենտացիայի մեջ Ռոզա Լյուքսեմբուրգի փաստարկումների վրա եյին հենվում: Սհա թե ինչու ընկ. Լենինն իր քննադատություն բոլոր խայթերը վերջինիս դեմ է ուղղում:

Ռ. Ս.-Դ. Բ. Կ. Կենտրոնական Կոմիտեյի 1913 թ. ամառը կուսակցական աշխատավորների հետ ունեցած խորհրդակցությունը ազգային հարցի վերաբերմամբ ընդունեց մի բանաձև, վորի մեջ ազգերի ինքնորոշման մասին մենք հետևյալ կետերն ենք կարդում:

«Ինչ վերաբերում է ցարական միապետությունից ճնշված ազգերի ինքնորոշման իրավունքին, այսինքն՝ անջատման, ինքնուրույն կառավարություն կազմելու իրավունքին, ապա ս.-դ. կուսակցությունն անպայման պիտի պաշտպանի այդ իրավունքը: Ընդհանրապես այս են պահանջում ինչպես միջազգային դեմոկրատիայի հիմնական սկզբունքները, նույնպես և առանձնապես Ռուսաստանի բնակչության մեծամասնություն

չլաված ազգային ճնշումը ցարական միապետութ-
 թյան կողմից, վորը Յեվրոպայի և Ասիայի հա-
 րեւմտյան պետութիւններին հետ համեմատած, իրե-
 նից ամենաբարբարոս ու ռեակցիոն իրավակարգն
 է ներկայացնում: Հետո այս ե պահանջում
 հենց իր՝ վելիկորոս բնակչութեան ազատագր-
 ման գործը. վելիկորոս բնակչութիւնն անըն-
 դունակ է դեմոկրատական կառավարութիւն
 ստեղծելու, յետեւ չի վտարվի վելիկորոսական
 սեւերայութեան նախնական իրեր, վորը սիս-
 տեմատիկաբար հովանավորվում ու սնվում է
 վոչ միայն ցարական միապետութեան և բո-
 լոր ռեակցիոն կուսակցութիւնների կողմից,
 այլեւ միապետութեան առջեւ հատկապես հա-
 կահեղափոխութեան եւոլյուսիոն ստորացող վելի-
 կորոսական բուրժուական լիբերալիզմի կողմից:

«Ազգերի ինքնորոշման հարցը, (այսինքն՝ ան-
 ջատման հարցի լուծման միանգամայն ազատ և
 դեմոկրատիկ յեղանակի ապահովումը պետութեան
 սահմանադրութեամբ) անթույլատրելի յե շփոթել
 այս կամ այն ազգի անջատման նպատակահար-
 մարութեան հարցի հետ: Այս վերջին խնդիրը
 ս.՝դ. կուսակցութիւնը յուրաքանչյուր առան-
 ձին դեպքում միանգամայն ինքնուրույն կեր-
 պով պիտի լուծի, յենեւելով վոչ ճ հասարակական
 դարգացման և պրոլետարիատի՝ սոցիալիզմի հա-

մար մղվող դասակարգային պայքարի շահերի
 տեսակետից:

Ըստ վորում, սոցիալ-դեմոկրատիան նկատի
 պիտի ունենա, վոր հաճախ ճնշված ազգերի կալ-
 վածատերերը, քահանաներն ու բուրժուազիան
 բանվորներին բաժան-բաժան անելու, հիմարաց-
 նելու իրենց ձգտումը ազգայնական լողունքնե-
 րով են քողարկում, նրանց թիկունքում պայ-
 ման կապելով տիրող ազգի կալվածատերերի և
 բուրժուազիայի հետ:

Ազգային հարցի ճիշտ առաջադրման գոր-
 ծում Լենինի մատուցած պատմական այդ մեծ
 ծառայութիւնը հասկանալու համար անհրա-
 ժեշտ է մի փոքր կանգ առնել Ռոզա Լյուքսեմ-
 բուրգի հայացքների վրա, վորը բազմաթիւ կող-
 մնակիցներ ունեցաւ ազգային հարցի նկատ-
 մամբ ինչպես բուն Լենստանում, այնպես և
 առանձնապես՝ Ռուսաստանում:

Ռուսական սոցիալ-դեմոկրատական կուսակ-
 ցութեան ծրագրի 9-րդ պարագրաֆը, վորը Ռո-
 զա Լյուքսեմբուրգի քննադատութեանը յենթար-
 կվեց, ասում է՝ «կուսակցութիւնը պա-
 հանջում է այն պիտի դեմոկրատա-
 կան հանրապետութիւն, վորի սահ-
 ման տիրութիւնը ի միջի այլոց ա-
 պահով եր «պետութեան կազմի մեջ



մ տ ն ո ղ ա զ գ ե ռ ի ի ն ք ն ո Ր Ո Ղ մ ա ն ի Ր ա-
վ ու ն ք ը »:

Քննադատելով այս ֆորմուլան, Ռոզա Լյուքս-
սեմբուրգը գտնում է, վոր ազգերի ինքնորոշման
իրավունքի ճանաչումը բուրժուական նացիո-
նալիզմի հին՝ «Ժողովուրդների ազատության և
անկախության իրավունքը պահանջող» լողուն-
գի կրկնությունն է բոլոր յերկրներում, բոլոր
եպոխաներում: Ռոզա Լյուքսեմբուրգը մատնա-
նշում է, վոր Լեհաստանում որ. «Ժողովուրդ-
ների ազատության բնածին իրավունքը» կլա-
սիկ ֆորմուլա յեր նարոդովցիների համար՝
սկսած դեմոկրատական ընկերությունից և վեր-
ջացրած Լիմանովսկու «Побудки»⁸⁾ թերթով,
սկսած սոց. ազգայնական «Побудки»-ից մին-
չեվ հակասոցիալիստական «Ժողովրդական Լի-
գան», մինչեվ վերջինիս հրաժարումն անկախու-
թյան ծրագրից: Այսպիսով, — ապացուցում եր
Ռոզա Լյուքսեմբուրգը, — ա զ գ ե ռ ի ի ն ք ն ո-
ր ո Ղ մ ա ն ի Ր ա վ ու ն ք ի ճ ա ն ա չ մ ա ն մ ե ջ
ս ոց ի ա լ ի զ մ ի և բ ա ն վ ո Ր ա կ ա ն ք ա ղ ա-
ք ա կ ա ն ու թ յ ա ն հ ե տ հ ա տ կ ա պ ե ս կ ա պ-
վ ա ծ և վ ո չ ի ն չ չ կ ա, մինչդեռ՝ բանվոր դա-
սակարգի ազգային հարցի, ինչպես և ալ հարցե-
րի հանդեպ բռնած դիրքը իր մեթոդով, իր ըս-
կզբունքային մոտեցումով դեպի այդ հարցը

պետք է տարբերվի ինչպես ամենաարմատական
բուրժուական, նույնպես և կեղծ-սոցիալիստա-
կան մանր-բուրժուական կուսակցությունների
տեսակետից:

Դեռ ավելին. Ռոզա Լյուքսեմբուրգը վոր-
ձում եր ապացուցել, վոր իբրեւ թե Ռուսական
Սոցիալ-Դեմոկրատական կուսակցություն ծրագրի
9-րդ §-ի այն պաշտպանների արգումենտացիան,
վորոնք իրավացիորեն ապացուցում եյին, վոր այդ
9-րդ կետը 1896 թ, Լոնդոնի Միջազգային Կոն-
գրեսում ընդունված ազգային հարցի բանաձևի
կիրառումն է միայն, պերիֆրազան, — ամենա-
կատարյալ թյուրիմացության վրա է հիմնված:
Լոնդոնի բանաձևին ասում ե՝ «Կոնգրեսը կողմ-
նակից է ազգերի ինքնորոշման իրավունքին և իր
համակրանքն է հայտնում զինվորական, ազգա-
յին և բոլոր այլ տեսակ ճնշումների տակ տա-
ռապող ամեն մի յերկրի բանվորներին. կոնգրե-
սը կոչ է անում այդ բոլոր յերկրների բանվոր-
ներին՝ մտնել ամբողջ աշխարհի գիտակից պրո-
լետարների շարքերը, վորպեսզի վերջիններիս
հետ միացած պայքարել միջազգային կապիտա-
լիզմը կործանելու և միջազգային սոցիալ-դեմո-
կրատական նպատակներն իրականացնելու հա-
մար: Յեթե Լոնդոնի բանաձևի այս կետը վոր-
յեվե մեկի դեմ է խոսում, ապա, իհարկե, Ռոզա

Լյուքսեմբուրգի և վո՛չ յերբեք Ռ. Ս.-Դ. Բ. Կ. ծրագրի 9-րդ §-ի դեմ:

Ռ. Ս.-Դ. Բ. Կ. ծրագրի 9-րդ կետի չափից դուրս ընդհանուր և շաբլոն բնույթն արդեն իսկ այն է ցույց տալիս,—ա՛նդում եր Ռոդա Լյուքսեմբուրգը,—վոր հարցի նման լուծումը խորթ է մարքսիստական վոգուհի: Ազգային իրավունքը, վոր հավասար չափով վերաբերում է բոլոր յերկրներին ու եզրխաներին, վոչ այլ ինչ է, յ եթե վոչ մի մետաֆիզիկ ֆրադա, նման «մարդու և քաղաքացու իրավունքներ» ֆրազին: Դիալեկտիքական մատերիալիզմը, վորպես գիտական սոցիալիզմի հիմունք, մի անգամ ընդմիշտ խղել է իր կապը այդպիսի հավիտենական «ֆորմուլաներից»: Քանի վոր պատմական դիալեկտիկական ապացուցել է, վոր «հավիտենական» ճշմարտություններ և հետևաբար իրավունքներ չկան, վոր Ենգելսի խոսքերով ասած, այն, ինչ այստեղ և հիմա լավ է յերեվում, նույնը վատ է մի այլ ժամանակ և ընդհակառակը՝ «այն, ինչ ճիշտ է և բանական այս հանգամանքներում, այլ պարագաներում անիրավացի յե և անհեթեթ»: Բոլոր ժողովուրդներին, յերկրներին, խմբավորումներին, մարդկային բոլոր արարածներին գրչի մի շարժումով անկախության, հավասարության և այլ հարանման բարեմասնություն-

ներով պարգեւատրելու այս հակումը հատկապես սոցիալիստական շարժման մանկական շրջանն է բնորոշում և առանձնապես՝ անարխիզմի ֆրազեոլոգիական քաջությունը:

Ժամանակակից բանվոր դասակարգի սոցիալիզմը, այն է գիտական սոցիալիզմը, չի հրապուրվում,—հեգնում եր Ռոդա Լյուքսեմբուրգը,—հասարակական ու ազգացին հարցերի արմատական և ազնվաբարո հնչող վճիռներով, այլ ամենից առաջ այդ պրոբլեմների ռեալ պայմաններն է քննության առնում:

«Ազգերի իրավունք»-ի այդ ֆորմուլան անբավարար է սոցիալիստների դիրքը ազգային խնդրում հիմնավորելու համար վոչ միայն այն պատճառով, վոր յուրաքանչյուր առանձին դեպքում նկատի չի առնում պատմական պայմանների (տեղի և ժամանակի) վողջ այլակերպությունը, ճիշտ նույն չափով և հաշվի չի առնում համաշխարհային հարաբերությունների զարգացման ընդհանուր ուղղությունը, այլևս նրա համար, վոր միանգամայն անտես է առնում ժամանակակից սոցիալիզմի հիմնական տեսությունը՝ դասակարգային հասարակության տեսությունը:

«Ա. դ. գ. ե. ի ինքնորոշման իրավունքներ» մասին խոսելիս, «ազգ» հասկացողության ներքո մենք ժողովուրդն ենք հասկանում, վորպես նրա

ամբողջութիւնն, վորպես անբաժան հասարակական, քաղաքական մի միավոր: Բայց իրոք, «ժողովուրդի» այդպիսի հասկացողութիւնը մեկն է բուրժուական իդեոլոգիայի այն կատեգորիաներից, վորոնց մարքսիստական տեսութիւնը արմատական քննութեան յենթարկեց և ապացուցեց, վոր նման մշուշապատ վորոշումների տակ, ինչպիսիք «քաղաքացիական ազատութիւն», «իրավահավասարութիւն որեւոր առաջ» հասկացողութիւններն են, — ամեն անգամ պատմական վորոշ բովանդակութիւն է թաքնված:

Դասակարգային հասարակութեան մեջ «ժողովուրդը», վորպես հասարակական քաղաքական անբաժանելի մի ամբողջութիւն՝ գոյութիւն չունի, այլ դրա տեղ յուրաքանչյուր ժողովուրդի մեջ գոյութիւն ունեն ներհակ շահերով և «իրավունքներով» ոժտված դասակարգեր:

Այս յեղանակով կազմակերպված հասարակութեան մեջ համայն անբաժանելի կամքի ու «ազգերի ինքնորոշման» մասին խոսք անգամ չի կարող: Յեթե մենք ժամանակակից հասարակութիւնների պատմութեան մեջ «ազգային շարժումների», «ազգային շահերի» համար մղվող պայքար ենք գտնում, ապա ուրեմն դա բուրժուազիայի իշխող խավերի սովորական շարժումներն են, բուրժուազիայի, վորը տվյալ դեպ-

քում այն չափով կարող է և այլ ժողովրդական խավերի շահերը ներկայացնել, ինչ չափով վոր «ազգային շահեր» անվան տակ պատմական զարգացման պրոգրեսիվ ձեւերն են ապաշտպանում և ինչ չափով վոր աշխատավոր դասակարգը դեռ չի դատվել բուրժուազիայի կողմից առաջնորդված այդ «ժողովուրդ» մասսայից և չի կազմել ինքնուրույն, գիտակից քաղաքական մի դասակարգ: Այս տեսակետից ֆրանսիական բուրժուազիան, իբրեւ յերրորդ դասակարգ, իրավունք ուներ ֆրանսիական ժողովուրդի անունից հանդես գալ Մեծ Հեղափոխութեան մեջ, և մինչեւ իսկ գերմանական բուրժուազիան 1848 թվին դեռ ելի վորոշ չափով կարող էր իրեն գերման «ժողովուրդի» ներկայացուցիչն համարել, թեյեւ կոմունիստական Մանիֆեստը և մասամբ «Նոր Հռենոսյան Թերթը» Գերմանիայում արդեն իսկ պրոլետարիատի դասակարգային հատուկ քաղաքականութեան առաջապահներն էին: Այս յերկու դեպքերն ապացուցում են, վոր բուրժուազիայի հեղափոխական դասակարգային գործը հասարակական զարգացման այն ժամանակի աստիճանում միաժամանակ լեյզել է գործը ժողովուրդի վողջ մասսայի, վորը ֆեոդալիզմի տիրապետութեան պատճառով դեռ չէր բուրժուազիայի հետ քաղաքականապես մի մասսա յեր կազմում:

«Այս հանգամանքն արդեն ապացուցում է,— փաստարկում է Ռոդա Լյուքսեմբուրգը,—վոր «ազգերի իրավունքներ» հասկացողությունը սոցիալիստական կուսակցութեան տեսակետից չի կարող ընդունելի լինել ազգային հարցում: Արդեն իսկ այդպիսի մի կուսակցութեան գոյութիւնը իսկապէս ապացույց է այն բանի, վոր բուրժուազիան դադարել է վողջ մասսայի առաջնորդը լինելուց, վոր պրոլետարիատի դասակարգը բուրժուազիայի թիկունքում չի թաքնվում, այլ վորպէս ինքնուրույն մի դասակարգ բաժանվել է նրանից՝ ունենալով հասարակական ու քաղաքական իր հատուկ ձգտումները: Քանի վոր «Ժողովուրդ», «Իրավունքներ» «Ժողովուրդի կամք» հասկացողություններն իբրեւ մի ամբողջութիւն, ինչպէս արդեն ասել ենք, պրոլետարիատի և բուրժուազիայի միջեւ յեղած անհասուն ներհակութեան ժառանգութիւնն է, ուստի և դասակարգայնապէս—գիտակից և ինքնուրույն կազմակերպված պրոլետարիատի կողմից այդ հասկացողութիւնների կիրառումն ապշեցուցիչ հակասութեան կլինեւ, և այն եւ վողջ դպրոցական տրամաբանութեամբ, հակասութիւն, այլ պատմական հակասութեան:

Ինչ վերաբերում է ազգային հարցին արդի հասարակութեան մեջ, սոցիալիստական կուսակ-

ցութիւնն ամեն բանից առաջ դասակարգային հակասութիւնները պիտի հաշվի առնի: Չեխական ազգային հարցն այլ նշանակութիւն ունի յերիտասարդ չեխ մանր-բուրժուազիայի համար և ուրիշ նշանակութիւն՝ չեխ պրոլետարիատի համար, ճիշտ նույնպէս, մենք չենք կարող ազգային հարցի լուծում փնտրել և պ. Կոստելսկու և նրա Միլուսովյան բատրակի Վարշավայի ու Լոդզի բուրժուազիաների, ինչպէս և լեհ գիտակից բանվորները համար, իսկ հրյական հարցը միանգամայն այլ կերպ է անդրադառնում հրյա բուրժուազիայի մոքերում, և այլ կերպ՝ հրյական հեղափոխական պրոլետարիատի գիտակցութեան մեջ: Սոցիալ-դեմոկրատիայի համար ազգային հարցը, ինչպէս և հասարակական ու քաղաքական բոլոր այլ պրոբլեմները,—ամենից առաջ դասակարգային շահերի հարցն է հանդիսանում:

Սոցիալ-դեմոկրատիան պրոլետարիատի դասակարգային կուսակցութիւնն է: Նրա պատմական խնդիրն է—պրոլետարիատի դասակարգային շահերի և դրա հետ միասին կապիտալիստական հասարակութեան հեղափոխական դարգացան շահերի արտահայտիչը լինել, նպատակ ունենալով սոցիալիզմն իրականացնել:

Հետեւաբար՝ սոցիալ-դեմոկրատիան վո՛չ թե ազգերի ինքնորոշման իրավունքն է իրականաց-

ներու, այլ աշխատավոր դասակարգի, շահագործ-
վող ու ճնշված պրոլետարիատի ինքնորոշման
իրավունքը: Այս տեսակետից սոցիալ-դեմոկրա-
տիան առանց բացառութեան քննութեան եւ առ-
նում հասարակական և քաղաքական բոլոր հար-
ցերը և այս տեսակետից ել ձեւակերպում եւ իր
ծրագրային պահանջները:

Ռուսական մարքսիստների ծրագրի 9-րդ §-ը
քննադատելիս, Ռոզա Լյուքսեմբուրգը, ըստ ըն-
կեր Լենինի արտահայտութեան, (հատ. XIX, էջ.
98) ծիծաղաշարժ կերպով «խելքին զոռ եւ տա-
լիս», թե ինչպես պետք եւ ճանաչել ազգի կամքը:

«Ազգը ինքնորոշման իրավունք պիտի ու-
նենա, — հեղինակը բացականչում եւ Ռոզա Լյուք-
սեմբուրգը, — բայց ո՞վ եւ «ազգ» կազմում, ո՞վ եւ
ի վիճակի եւ և ո՞վ իրավունք» ունի «ազգի» և
նրա կամքի ճանաչված արտահայտիչը լինելու:

Ի՞նչ կերպ իմանալ, թե իրոք ինչ եւ ուղում
«ժողովուրդը»: Կա՞ արդեոք գոնե մի քաղաքա-
կան կուսակցութիւն, վորը չպնդեր, թե ինքը,
հակառակ մնացած բոլորի, «ժողովուրդի» կամքի
իսկական արտահայտիչն եւ, մինչդեռ բոլոր մնա-
ցածները ժողովրդի կամքի կեղծ ու աղճատված
արտահայտիչներն են: Նյապես բոլոր բուրժուա-
կան-ազատամիտ կուսակցութիւնները ժողովրդի
կամքի մարմնացումը իրենց են համարում, իրենց

վերապահելով «ժողովրդի» ներկայացուցչութեան
բացառիկ մենաշնորհը: Բայց և պահպանողական ու
ռեակցիոն կուսակցութիւնները հեռու չեն ժո-
ղովրդի կամքն ու շահերը վկա կանչելուց, իսկ
վորոշ դեպքերում՝ վոչ պակաս իրավունքներով:
Ֆրանսիական ժողովրդի կամքի անյերկբայ արտա-
հայտութիւնը Ֆրանսիական Մեծ Հեղափոխու-
թիւնն եր, բայց Նապոլեոնը, վորը ճարպիկ յեղա-
նակով կեղծեց Բրյուսների 18-ը, իր պետութեան
ամբողջ բարեփոխութեան հիմքում դրեց բառա-
ցի այս սկզբունքը՝ „la volonté générale“ (ընդ-
հանուր կամք):

1848 թ. «ժողովրդի կամքը» նախ հանրա-
պետութիւնն ու ժամանակավոր կառավարու-
թիւնն առաջ քաշեց, հետո Ազգային ժողովը
և, վերջապես, Լյուդովիկ Բոնապարտին, վորը
վոչնչացրեց և՛ հանրապետութիւնը, և՛ ժամա-
նակավոր կառավարութիւնը, ե՛ր Ազգային ժողո-
վը: Հեղափոխութեան ժամանակ Ռուսաստանում
լիբերալիզմը «ժողովրդի» անունից կաղեւտական
միջնադարութիւն եր պահանջում, նույն այդ ժո-
ղովրդի անունով միահեծան իշխանութիւնը հը-
րյական ջարդեր եր կազմակերպում, իսկ հեղա-
փոխական գյուղացիութիւնն իր ժողովրդական
կամքն եր յերեւման բերում, հրդեհելով կալվա-
ծատիրական ագարակները: Լեհաստանում ժողո-

վերդի կամքը կապալուով եր վերցրել սեւ-հարյու-
րակային կուսակցութիւնը, «Ժողովրդական Դե-
մոկրատիան», վորը հանուն «ազգերի ինքնորոշ-
ման» «ազգայնական» բանվորներին դրդում եր
զադանի կերպով սպանել սոցիալիստ բանվորնե-
րին: «Ժողովրդի իսկական կամքի» հետ նույնն
ե անդի ունենում, ինչ վոր Լեսսինգի «Նաթան
Իմաստուն» դրամայի մեջ անդի ունեցավ իսկա-
կան մատանու հետ. այդ կամքը կորել ե և թը-
վում ե, թե համարյա դժվար ե այն ստից ու
կեղծութիւնից զանազանել: Դեմոկրատական
սկզբունքն առերես կարծես թե ժողովրդի իս-
կական կամքը զանազանելու մի միջոց ե տա-
լիս. այդ միջոցը—մեծամասնութեան կարծիքի
վորոշումն ե: Ժողովուրդն այն ե ուզում, ինչ Ժո-
ղովրդի մեծամասնութիւնն ե ուզում: Սակայն
վա՛յ այն սոցիալ-դեմոկրատական կուսակցու-
թեան, վոր յերբեմիցե իր համար այդ սկզբունքն
ընդունելի կհամարի: Այդ բանը հենց իր՝ սոցիալ-
դեմոկրատիայի համար, վորպես հեղափոխական
մի կուսակցութեան,—հաւասար կլինի մահապատ-
ժի: Իր բնույթով սոցիալ-դեմոկրատիան մի կու-
սակցութիւն ե, վոր ժողովրդի խոշոր մեծամաս-
նութեան շահերն ե ներկայացնում: Բայց այնու-
ամենայնիվ վորքան հարցը գիտակից կամքին ե
վերաբերում, բուրժուական հասարակութեան մեջ

ժամանակավորապես նա փոքրամասնութեան կու-
սակցութիւնն ե, մի փոքրամասնութեան, վորը
միայն մեծամասնութիւն դառնալու յե ձգտում,
թեյեւ իր ձգտումների, իր քաղաքականութեան
և իր ծրագրի մեջ նա ժողովրդի մեծամասնու-
թեան կամքն ե արտացոլում. սակայն շնորհիվ
այն բանի, վոր նա վո՛չ յերբեք ամբողջ ժողո-
վրդի, այլ միայն նրա պրոլետար դասակարգի
և սրա սահմաններում՝ կամքի արտահայտիչ դառ-
նում,—սոցիալ-դեմոկրատիան չե՛ հանդիսանում
մեծամասնութեան կամքի արտահայտիչը և չի՛
յել հավակնում հանդիսանալու այդպիսին: Նա
միայն մեծ քաղաքների արդյունազորական պրո-
լետարիատի առաջավոր, ավելի հեղափոխական
շերտի կամքն ու գիտակցութիւնն ե արտահայ-
տում: Նա ջանում ե հենց այդ կամքը զարգաց-
նել, նրա համար ճանապարհ հարթել դեպի բան-
վոր ժողովրդի մեծամասնութիւնը, վերջինիս իր
սեփական շահերը պարզելով: Սոցիալ-դեմոկրա-
տիայի համար «Ժողովրդի կամքը» բնավ չի հան-
դիսանում մի կուռք, վորի առջեւ նա յերկուղա-
ծութեամբ ծունր ե չոքում. ընդհակառակը՝ սո-
ցիալ-դեմոկրատիայի պատմական վողջ կոչումն
ամենից առաջ «Ժողովրդի» կամքի, այսինքն՝ նրա
աշխատավոր մեծամասնութեան կամքի մշակման
ու հեղափոխականացման մեջ ե կայանում:

Գիտակցութեան նույն այդ ավանդական ձեւերը, — շարունակում ե Ռոզա Լյուքսեմբուրգը, — վոր ժողովրդի մեծամասնութիւնը, հետեւաբար և աշխատավոր դասակարգերը յերեւման են բերում բուրժուական հասարակութեան մեջ, դժբանք սովորաբար ձեւերն են բուրժուական գիտակցութեան, վորը թշնամի յե սոցիալիզմի իդեալներին և ձգտումներին: Անգամ Գերմանիայում, ուր սոցիալ-դեմոկրատիան արդեն ամենաուժեղ քաղաքական կուսակցութիւնն է հանդիսանում, դեռ մինչեւ հիմա նա իր յերեք և մի քառորդ միլիոն ընտրողներով փոքրամասնութիւն է կազմում բուրժուական կուսակցութիւններին ու թ միլիոն ընտրողների և տասներեք միլիոն ընտրական իրավունքով ոգտւողների դիմաց: Պարլամենտական ընտրութիւնների վիճակագրութիւնը, ճիշտ է, թեյեւ վոչ ճշգրիտ, բայց այնուամենայնիւ վորոշ չափով հասկացողութիւն է տալիս խաղաղ ժամանակ յեղած ուժերի փոխհարաբերութեան մասին: Յեւ այսպես, այժմ գերմանական ազգն իրեն այն ձեւով է ինքնորոշում, վոր իր մեծամասնութեան միջից պահպանողականներ, կղերականներ և ազատամիտներ են ընտրում ու նրանց ձեռքը տալիս իր քաղաքական ճակատագիրը: Նույնը տեղի յե ունենում, միայն թե ավելի մեծ չափով, բոլոր յերկրներում»:

* * *


Ազգերի ինքնորոշման ֆորմուլայի քննադատութեան մեջ Ռոզա Լյուքսեմբուրգի գլխավոր արգումենտներից մեկն յեղավ այն ցուցմունքը, վոր այդ ֆորմուլայի բնույթը վերացական է, մետաֆիզիկ, զուրկ ամեն մի գործնական նըշանակութիւնից:

Ժամանակակից բանվորական կուսակցութիւնների քաղաքական ծրագիրները գրեթե, — դատում եր Ռոզա Լյուքսեմբուրգը, — իրենց նըպատակ են դնում վոչ թե սոցիալական իդեալի վերացական սկզբունքների տարածելը, այլ ձեւակերպումն այն գործնական, հասարակական և քաղաքական բարեփոխումների, վորոնց կարիքն զգում և վորոնց պահանջում է բուրժուական հասարակութեան ծոցում գիտակից պրոլետարիատը՝ վերջնական հաղթանակը դուրսացնելու համար: Նրանց քաղաքական ծրագրի կետերը ձեւակերպւած են այն վորոշակի նպատակով, վորպեսզի անմիջական ու գործնական և բուրժուական իրավակարգի միջավայրում իրականացնելի լուծում տրվի քաղաքական և հասարակական կյանքի կենսական հարցերին, հարցեր, վորոնք պրոլետարիատի դասակարգային պայքարի բնագավառն են մտնում,

վորպեսզի նրանք ամենորյա քաղաքականության և նրա կարիքների համար ուղեցույց ծառայեն՝ վորպեսզի նրանք հարկավոր ձեւով առաջ բերեն և ուղղութիւն տան բանվորական կուսակցութիւնների քաղաքական գործունեութիւնը, վորպեսզի վերջապես նրանք պրոլետարիատի հեղափոխական քաղաքականութիւնը զատեն բուրժուական և մանր-բուրժուական կուսակցութիւնների քաղաքականութիւնից:

«Ազգերի ինքնորոշման» ֆորմուլան, — ապացուցում եր Ռոզա Լյուքսեմբուրգը, — այս հատկութիւնը չունի: Պրոլետարիատի ամենորյա քաղաքականության համար նա վոչ մի գործնական ուղեցույց չի տալիս և՛ ազգային հարցի վոչ մի գործնական լուծում Որինակ, այդ ֆորմուլան ռուսական պրոլետարիատին ցույց չի տալիս, թե ի՞նչ յեղանակով նա պիտի պահանջի լեհական ազգային հարցի, ֆինլանդականի, կովկասյանի, հրչականի և այլն լուծումը: Ավելի շուտ, այդ ֆորմուլան բոլոր շահագրգռված «ժողովուրդները» համար անսահման լիազորութիւն ե միայն, վորպեսզի նրանք ըստ իրենց հայեցողութիւն լուծեն ազգային հարցերը: Միակ գործնական յեղրակացութիւնը, վոր կարելի չե հանել վերոյիշյալ ֆորմուլայից բանվոր դասակարգի ամենորյա քաղաքականութիւն համար, դա այն ցու-

ցումն ե, վոր նրա պարտականութիւնը կայանում ե ամեն տեսակ ազգային ճնշման դեմ պայքարելու մեջ: Յեթե մենք ճանաչել ենք յուրաքանչյուր ազգի ինքնորոշման իրավունքը, հետեւաբար, տրամաբանորեն դատելով, պետք ե պարսպվենք մի ազգի ամեն տեսակ փորձերը — մի ուրիշ ազգի ճակատագիրը վորոշելու, մի ազգի կողմից զոռով մշուսի վզին ազգային այս կամ այն կենցաղի փաթաթելը: Յեւ սակայն, պրոլետարիատի դասակարգային բողոքի և ազգային ճնշման դեմ պայքարելու պարտականութիւնը բնավ չի բղխում «ազգերի հատուկ իրավունքից» այնպես, ինչպես որ. նրա ձգտումը՝ դեպի սեռերի սոցիալական և քաղաքական իրավահավասարութիւնը բնավ չի հետեւում «կնոջ հատուկ իրավունքներից», վորոնց օմատնանշում են իրենց ազատագրման համար պայքարող բուրժուական կանայք, այլ նա պայմանավորված ե դասակարգային կարգերի ընդհանուր ժխտումով, հասարակական անհավասարութիւն և տիրապետութիւն ամեն մի ձեւի ժխտումով, մի խոսքով պայմանավորված ե հենց սոցիալիզմի սկզբունքներով: Սակայն բացի դրանից գործնական քաղաքականութիւն համար հիշյալ ցուցումը հաճախ բացասական հատկութիւն ունի: Ազգային ճնշման ամեն տեսակ զրսեւորումների դեմ պայքարելու պարտա-



կանությունը դեռելիս բնավ պարզաբանումն չե այն բանի, թե ինչ պայմանների, քաղաքական ինչ ձեւերի պիտի ձգտի Ռուսաստանի գիտակից պրոլետարիատը այժմ լեհական, լատվիական, հրեական և այլ. ազգային հարցերը լուծելու համար, ինչ ծրագիր պիտի հակադրի նա դասակարգերի և կուսակցությունների այժմյան պայքարի մեջ՝ զանազան բուրժուական, ազգայնական ու կեղծ սոցիալիստական ծրագրերին։ Մի խոսքով «ազգերի ինքնորոշման իրավունքը» ֆորմուլան ազգային հարցի եյապես քաղաքական և ծրագրային հրահանգը չե, այլ այդ հարցից յուրատեսակ մի խուսափում։

Իհարկե, մարքսիստների մեջ հիմա մենք չենք գտնի մարդիկ, վորոնց համոզել կարողանար Ռոզա Լյուքսեմբուրգի արգումենտացիան։ Սակայն, կար մի ժամանակ, յերբ ազգային հարցի մասին արծարծած նման հայացքները բազմաթիվ կողմնակիցներ ունեյին ռուսական և լեհական մարքսիստների մեջ։ Ի միջի այլոց ընկ. Լենինը ցույց ե տալիս (հ. XIX, եջ. 206—207), վոր 1905 թվին մինչեւ իսկ այնպիսի մի ընկեր, ինչպիսին Կ. Ռադեկն ե, ինքնորոշման դեմ դուրս յեկավ ի թիվս այլոց այսպիսի մի արգումենտ առաջադրելով. — ինքնորոշումը այն միտքն ե սնում, վոր իբր թե «սոցիալ-դեմոկրատիայի

պարտականությունն ե՝ աջակցել անկախության համար մղվող ամեն մի պայքարի»։ հիմա միայն 2 և 2½ ինտերնացիոնալների սոցիալիստների ու «մարքսիստների» գրական աշխատանքների մեջ մենք «ազգերի ինքնորոշման իրավունքի» ժխտումն ենք հանդիպում, Ռոզա Լյուքսեմբուրգի հողվածներից վերցրած արգումենտների կրկնությամբ, վորը, իհարկե, չեւ կարող նախատեսել, թե ինչպես կոգտագործեն իր քննադատությունը պրոլետարիատի դավաճանները։

Միանգամայն ճիշտ ե ընկ. Զինովյեվը մատնանշում, վոր ազգային հարցի մասին զրած իր հողվածներում Լենինն իրեն ցույց տվեց վոչ միայն վորպես խորամիտ տեսաբան, այլևս իրրեւ պետական մեծ գործիչ, մեր կուսակցության ուսուցիչ ու առաջնորդ, վորը նրան ճիշտ ուղի ցույց տվեց։ Վ. Ի. Լենին — տեսաբանը նախապատրաստեց պետության ղեկավար — Վ. Ի. Լենինի աշխատանքը։

4. ԼԵՆԻՆԸ ԱԶԳԵՐԻ ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ

Քննադատելով Ռոզա Լյուքսեմբուրգի տեսակետը, ընկ. Լենինն ամենից առաջ այս հարցն ե զնում. «Ի՞նչ ե ազգերի ինքնորոշումը»։ Պատասխանն արդյոք «իրավունքի ամեն տեսակ ընդհանուր հասկացողություններից» դուրս բեր-

ված իրավաբանական վորոշումների մեջ պետք է վորոհնել, — հարցնում է ընկ. Լենինը — թե՞ պատասխանը պետք է ազգային շարժումների պատմա-տնտեսական ուսումնասիրության մեջ փնտռուել:

«Ռոդա Լյուքսեմբուրգը, վոր տվյալ պարագրաֆի վերացական ու մետաֆիզիկ լինելու առթիվ յերկար ճառաբանում էր, հենց ինքն ընկավ վերացականության ու մետաֆիզիկության մեղքի մեջ: Ինքը Ռոդա Լյուքսեմբուրգն է, վոր ինքնորոշման մասին ընդհանուր դատողություններ անելիս մշտապես մոլորվում է (մինչ ծիծաղաշարժ կերպով «խելքին զոռ տալը», այն մասին թե ինչպես պետք է ճանաչել ազգի կամքը), վոր մի տեղ պարզ ու ճշգրիտ չդնելով այն հարցը, թե արդյոք խնդրի ելությունը իրավաբանական վորոշումներն են, թե՞ ամբողջ աշխարհի ազգային շարժումների փորձի մեջն է կայանում:

«Մարքսիստի համար անխուսափելի այս հարցի ճշգրիտ դրումը միանգամից ի դերեվ կըհաներ Ռոդա Լյուքսեմբուրգի հարցերի ինը տասերորդը: Ազգային շարժումները առաջին անգամը չէ, վոր ծագում են Ռուսաստանում և միայն նրան չէ, վոր հատուկ են: Ամբողջ աշխարհում ֆեոդալիզմի դեմ կապիտալիզմի տարած վերջնական հաղթանակը ազգային շար-

ժումների հետ է կապված յեղել: Այս շարժումների տնտեսական հիմքը նրանում է, վոր ապրանքային արդյունագործության կատարյալ հաղթության համար անհրաժեշտ է, վոր ներքին շուկան նվաճվի բուրժուազիայի կողմից, անհրաժեշտ է, վոր մի լեզվով խոսող բնակչության տերիտորիաները մի պետության մեջ շաղկապվեն, այդ լեզվի դարգացման բոլոր խոչընդոտները վերացվեն և այն ամբապնդվի գրականության մեջ: Լեզուն մարդկային հարաբերության ամենակարեւոր միջոցն է. լեզվի մի լինելը և նրա անարգել զարգացումը ժամանակակից կապիտալիզմին համապատասխանող իսկական ազատ ու ընդարձակ առեւտրական շրջանառության, բնակչության առանձին դասակարգերի ազատ ու լայն խմբավորման ամենակարեւոր պայմաններից մեկն է, և, վերջապես, շուկայի և բոլոր մեծ ու փոքր սեփականատերերի, ծախողների ու գնորդների սերտ կապակցության պայմանն է:

«Ուստի և ժամանակակից կապիտալիզմի այս պահանջներին ամենից բավարարող ազգային պետություններ կազմելն ամեն տեսակ ազգային շարժումների տենդենցն է հանդիսանում: Ամենախոր տնտեսական գործոնները դրդում են դեպի այդ տենդենցը, իսկ վորջ Արեւմտյան Ֆեդերալայի համար՝ առավել չափով. ուստի ազգային պետու-

թյունը ամբողջ քաղաքակիրթ աշխարհի կապի-
տալիստական շրջանի համար տիպիկ է և նորմալ:
«Հետեւաբար, յետեւ մենք կամենում ենք ըմ-
բռնել ազգերի ինքնորոշման նշանակութունը,
խաղ չսարքելով իրավաբանական բացատրու-
թյունների հետ, վերացական վորոշումներ «չհնա-
րելով», այլ քննության առնելով ազգային շար-
ժումների պատմա-տնտեսական պայմանները, —
ապա մենք անխուսափելիորեն այս յեզրակացու-
թյանը կհանգենք՝ ազգերի ինքնորոշում
անվան տակ հասկացվում է նրանց
պետական անջատումը ոտար ազգա-
յին կոլեկտիվներից, հասկացվում է
ինքնուրույն ազգային պետության
կազմվելը»:

Մենք տեսանք, վոր Ռոդա Լյուքսեմբուրգը
Ռ. Ս. Դ. Բ. Կ. ծրագրի 9-րդ §-ի հանդեպ կծու
խոսքեր չի խնայում, հայտարարելով այն «ան-
բովանդակ», «չաբլոն», «մետաֆիզիկ ֆրագա» և
այսպես անվերջ: Բնական կլինեք սպասել, — այս
առթիվ նկատում ե ընկ. Լենինը, — վոր մի գրող
կին, վորն այնպես գերազանցորեն դատապար-
տում է մետաֆիզիկական մարքսիստական ըմբռնու-
ղությամբ, այսինքն՝ վորպես հակադիալեկտիկա ու
գատարկ աբստրակցիաներ, մեզ խնդրի կոնկրետ
պատմական քննության մի նմուշ կտա: Խոսքը մի

վորոշյերկրի՝ Ռուսաստանի, մի վորոշ եպոխայի՝
XX-րդ դարի սկզբի մարքսիստների ազգային
ծրագրի մասին ե: Հավանորեն Ռոդա Լյուքսեմ-
բուրգը կդնի հենց այն հարցը, թե Ռուսաստանը
պատմական ինչ եպոխա յե ապրում, ինչպիսի՞ք
յեն տվյալ եպոխայի տվյալ յերկրի ազգային հար-
ցի և ազգային շարժումների կոնկրետ առանձնա-
հատկությունները:

Այս մասին Ռոդա Լյուքսեմբուրգն ուղղակի
վոչինչ չի ասում: Թե ինչ վիճակում ե ազգա-
յին հարցը Ռուսաստանում տվյալ պատմական
եպոխայում, ինչպիսիք են Ռուսաստանի առանձ-
նահատկությունները, — այդ հարցի մասին քննու-
թյան ստվեր անգամ չեք գտնի դուք նրա մոտ:

Արեվմայան ցամաքային Յեվրոպայում բուր-
ժուական դեմոկրատական հեղափոխությունների
եպոխան ընդգրկում ե բավականին վորոշակի ժա-
մանակամիջոց, մոտավորապես 1789 թվից մին-
չեվ 1871 թվի: Հենց այս եպոխան ել ազգային
շարժումների և ազգային պետություններ ստեղ-
ծելու եպոխան ե յեղել: Այս եպոխան վերջնա-
լուց հետո Արեվմայան Յեվրոպան բուրժուական
պետությունների մի բարդ սխտեմի վերածվեց,
ըստ վորում այդ պետությունները, ընդհանուր
կանոնի համաձայն, դարձան ազգային միասնա-
կան պետություններ: Այս պատճառով այժմ

ազգերի ինքնորոշման իրավունք փնտռել Արեւի-
մտյան Յեւրոպայի սոցիալիստների ծրագրի մեջ
— դա նշանակում է՝ մարքսիզմի այբուբենը չի-
մանալ:

Արեւելյան Յեւրոպայում և Ասիայում բուր-
ժուական — դեմոկրատական հեղափոխություննե-
րի եպոխան 1905 թվին միայն սկսվեց: Հեղա-
փոխությունը Ռուսաստանում, Պարսկաստանում,
Տաճկաստանում, Չինաստանում, սլաոնաբաղանե-
րը՝ Բալկաններում — ահա մեր եպոխայի, մեր
«Արեւելքի» համաշխարհային անցքերի շղթան:
Յեւ անցքերի այս շղթայի մեջ միայն կույրը չի
կարող մի ամբողջ շարք բուրժուական — դեմոկրա-
տական ազգային շարժումներ և ազգայնապես
անկախ, ազգայնապես միասնական պետություն-
ներ ստեղծելու ձգտումները տեսնել: Յեւ վորով-
հետեւ Ռուսաստանն իր հարեւան յերկրների հետ
միասին այս եպոխան ե ապրում, հենց այդ պատ-
ճառով ել մեզ անհրաժեշտ ե մեր ծրագրի մեջ
մի կետ ունենալ ազգերի ինքնորոշման մասին:

«...Ռուսաստանը — դա մեկ պետություն ե
ազգային մի կենտրոնով՝ վելիկորոսական կենտ-
րոնով: Վելիկորոսները հսկայական մի տերիտո-
րիա յեն բռնում, թվով մոտ 70 միլիոնի հասնե-
լով: Այս ազգային պետության առանձնահատկու-
թյունն ե. 1-ինն այն, վոր «այլազգիները» (վո-

րոնք ամբողջությամբ վերցրած բնակչության
մեծամասնությունն են կազմում՝ 57%⁰) յերկրի
ծայրամասերում են բնակվում. 2-րդն այն ե,
վոր ճնշումն այս այլազգիների նկատմամբ շատ
ավելի ուժեղ ե, քան հարեւան պետությունների
մեջ (և մինչեւ իսկ վոչ միայն յեւրոպական պե-
տությունների մեջ). 3-րդն այն ե, վոր բազմա-
թիվ դեպքերում ծայրամասերում ապրող ճնշված
ժողովուրդները սահմանի այն կողմում ունեն
իրենց ցեղակիցները, վորոնք ազգային ավելի ան-
կախությամբ են ոգտվում (հերիք ե հիշել թե-
կուզ պետության արեւմտյան և հարավային սահ-
մաններում ապրող ֆիններին, շվեդներին, լեհե-
րին, ուկրայնացիներին, ուսմիներին). 4-րդն
այն ե, վոր կապիտալիզմի զարգացումը և կուլ-
տուրայի ընդհանուր մակարդակը այլազգիներով
բնակված ծայրամասերում ավելի բարձր ե, քան
պետության կենտրոնում, և՛ վերջապես, հարե-
ւան ասիական պետությունների մեջ մենք տես-
նում ենք սկսվող շրջանը բուրժուական հեղա-
փոխությունների և ազգային շարժումների, վո-
րոնք և մասամբ Ռուսաստանի սահմաններում
ապրող ցեղակից ժողովուրդներին են բնորոշ:

Այսպիսով, — յեղրափակում ե ընկ. Լենինը,
— հատկապես Ռուսաստանում ազ-
գային հարցի պատմական կոնկրետ

առանձնահատկությունները մեզանում առանձին կարելի է ուրեւնի տալիս ազգերի ինքնուրույն մասնավորութիւնն առանձնաւոր խնդրին մեր ապրած եւ պոխայի մեջ:

Մի այլ փաստ, վերը Ռոզա Լյուքսեմբուրգը շատ հաճախ է կրկնում, դա ինչպես մենք տեսանք մասնանշումն է այն բանի, թե «ինքնուրույն իրավունքի» լոգունգը չունի իբր թե գործնական վոչ մի արժեք: Այս փաստը Լենինը ջախջախում է հետեւյալ արգումենտացիայով.

«Յուրաքանչյուր ազգի ազգայնական բուրժուազիայի տեսակետից պրոլետարների ամբողջ խնդիրն ազգային հարցում «անգործնական» է, քանի վոր պրոլետարները, թշնամի լինելով ամեն տեսակ նացիոնալիզմի, «աբստրակտ» իրավահավասարութուն, ամենափոքր արտոնությունների սկզբունքային չգոյությունն են պահանջում: Ռոզա Լյուքսեմբուրգը այս բանը չհասկանալով, պրակտիցիզմին նվիրւած իր անմիտ ներբողնութւլ լայն բացեց դռներն ոպորտունիստների առջեւ, հատկապես վելիկորոսական նացիոնալիզմին ոպորտունիստական զիջումներ անելու համար:

Ինչու՞ վելիկորոսական նացիոնալիզմին: Վերոլինետել Ռուսաստանում վելիկորոսները ճշնշող ազգ են, իսկ ազգային տեսակետից բնական

է, վոր ոպորտունիզմն այլ կերպ կարտահայտվի ճնշւած, այլ կերպ՝ ճնշող ազգերի մեջ:

Ճնշւած ազգերի բուրժուազիան հանուն իր պահանջների «գործնականության», պրոլետարիատին անպայման աջակցության կկանչի իր ձգտումներն իրականացնելու: Ամենից գործնականն է ուղղակի «այո» ասել այս ինչ ազգի անջատման առթիւ և վոչ թե կողմնակից լինել բոլորի և բոլոր ազգերի անջատվելու իրավունքին:

Պրոլետարիատը դեմ է նման պրակտիցիզմի. ճանաչելով ազգային պետության իրավահավասարությունն ու հավասար իրավունքը, նա ամեն բանից բարձր է գնահատում ու դասում բոլոր ազգերի պրոլետարների միությունը, բանավորների դասակարգային անկյունակետից գնահատելով ազգային ամեն մի պահանջ, ազգային ամեն մի անջատում: Պրակտիցիզմի լոգունգն իրապես բուրժուական ձգտումների վոչ—քննադատական ընդորինական լոգունգն է միայն:

Յեթե մենք չառաջադրենք և ագիտացիայի մեջ չմտցնենք անջատման իրավունքի լոգունգը, այդ դեպքում մենք նպաստած կլինենք վոչ միայն բուրժուազիային, այլ և ճնշող ազգի ֆեոդալներին ու միահեծությանը: Այս փաստը Կաուցկին վաղուց է առաջադրել Լյուքսեմբուրգի դեմ, և դա անհերքելի յէ: Յ ե Ր Կ յ ու ղ ե լ ո Վ Լ ե

հաստատանի ազգայնական բուրժուազիայի ներքին լուրջ», ռուսական մարքսիստները ծրագրել մեջ առաջագրված անջատման հարցի իր ժխտումով Ռոզա Լյուքսեմբուրգն իրապես սեփականության իրեն երկնե ոգնում, վելիկոբոսներին: Իրապես նա նրապատում երկրորդուն իստական հատուկություն կնքելուն վելիկոբոսները արտոնութունները (ավելի վատ բանի, քան արտոնութունները) հետ:

Տարված լինելով Լեհաստանում տիրող նացիոնալիզմի պայքարով, Ռոզա Լյուքսեմբուրգը մոռացավ վելիկոբոսների նացիոնալիզմի մասին, թեյել հենց այդ նացիոնալիզմն է հիմա ամեն ինչից սոսկալի, հենց նա յե, վոր պակաս բուրժուական է, բայց առավել ֆեոդալական, հենց նա յե դեմոկրատիայի և պրոլետարական պայքարի գլխավոր արգելակը: Ճնշված ազգի ամեն մի բուրժուական նացիոնալիզմի մեջ կա համադեմոկրատական բովանդակություն, և այդ բովանդակությունն է, վոր մենք անպայմանորեն պաշտպանում ենք, խիստ կերպով ջոկելով նրա ազգային բացառիկության ձգտումը, պայքարելով լեհ բուրժուայի՝ հրեային ճնշելու ձգտման դեմ և այլն:

«Պրակտիցիզմի» յետեմն ընկած, Ռոզա Լյուքսեմբուրգն աչքաթող ե արել և՛ վելիկոբոսական և այլ ազգի պրոլետարիատի գլխավոր գործնական խնդիրը, ամենորյա ագիտացիայի ու պրոպագանդային խնդիրը՝ ընդդեմ ամեն տեսակ պետական ազգային արտոնութունների և հոգուաբուր ազգերի իրենց ազգային պետութունն ունենալու իրավունքի. այսպիսի մի խնդիր—(այժմ) մեր գլխավոր խնդիրն է ազգային հարցում, քանի վոր միայն այս ճանապարհով մենք պաշտպանում ենք դեմոկրատիայի և ամեն տեսակ ազգերի բոլոր պրոլետարները իրավահավասար միության շահերը:

«Թող այդ պրոպագանդան «անգործնական» լինի թե՛ վելիկոբոսների՝ ճնշողների տեսակետից և թե՛ ճնշված ազգերի բուրժուազիայի տեսակետից (և՛ մեկը և՛ մյուսը վորոշակի «այո» ու «վոչ» են պահանջում, սոց. դեմ. անորոշության մեջ մեղադրելով): Իրապես հենց այդ պրոպագանդան է, և միայն նա յե, վոր ապահովում է մասսաների թե՛ իսկական դեմոկրատական և թե՛ իսկական սոցիալիստական դաստիարակությունը: Միայն այսպիսի պրոպագանդան կարող է յերաշխավորել ազգային խաղաղության ամենամեծ շանսերն Ռուսաստանում, յեթե նա բազմերանգ ազգային պետություն է մնալու,—և ազ-

գային պետութիւնները ամենախաղաղ (և՛ անվնաս՝ պրոլետարական դասակարգային պայքարի համար) բաժանումը, յեթե՝ հարց կառաջանա այդպիսի մի բաժանման:

5. ՊԵՏԱԿԱՆ ԼԵԶՈՒ. ՆԱՄԱԿ ՇԱՀՈՒՄՅԱՆԻՆ

Ընկ. Լենինը պայքարում եր հարկադրանքի ամեն մի տարրի դեմ ազգային հարցում, մի ազգի դեպի մյուսն ունեցած հարաբերութեան մեջ: Այսպես, նա սուր կերպով քննադատում եր կադետների տեսակետը պետական լեզվի պարտավորեցուցիչ լինելու մասին:

«Ինչ ե նշանակում պետական պարտավորեցուցիչ լեզու: Գործնականապես դա նշանակում ե, թե վեկիկորոսների լեզուն, վորոնք Ռուսաստանի բնակչութեան փոքրամասնութիւնն են կազմում, Ռուսաստանի մնացած այլ բնակչութեան գլուխն ե փաթաթվում: Ամեն մի դպրոցում պետական լեզվի դասավանդումը պարտավորեցուցիչ պիտի լինի, պաշտոնական ամբողջ գործավարութիւնը պետական և վոչ թե տեղական բնակչութեան լեզվով պիտի կատարվի:

«Ռուս լեզուն—մեծ ե ու կարող, —ասում են մեզ իրերալիսերը, Արդ, մի՞թե դուք չեք ուզում, վոր ամեն վոք, ով ապրում ե Ռուսաս-

տանի վորյեվե ծայրամասում, իմանա այդ մեծ ու կարող լեզուն: Մի՞թե դուք չեք տեսնում, վոր ուռւ լեզուն կհարստացնի այլ ցեղերի գրականութիւնը և նրանց հնարավորութիւն կտա կուլտուրական մեծ արժեքների հաղորդակից լինելու»

«Այս բոլորը ճիշտ ե, պարոնայք իրերալիսեր, պատասխանում ենք մենք նրանց: Մենք ձեզնից լավ գիտենք, վոր Տուրգենեվի, Տոլստոյի, Դոբրոլյուբովի, Չերնիշևսկու լեզուն մեծ ե ու կարող: Մենք ձեզնից շատ ենք ուզում, վոր Ռուսաստանում բնակվող առանց խտրութեան բոլոր ազգերի ճնշված դասակարգերի միջով հնարավոր չափով ավելի սերտ հարաբերութիւն և յեղբայրութիւն լինի: Հասկանալի յե՝ մենք կողմնակից ենք, վոր Ռուսաստանի յուրաքանչյուր բնակիչ հնարավորութիւն ունենա ուսական մեծ լեզուն սովորելու:

«Մի բան միայն մենք չենք ուզում՝ հարկադրանքի տարրը: Մենք չենք ուզում մարդկանց մահա կոմիտեի դրախտը շել: Վորովհետեւ վորքան ել դուք գեղեցիկ Քրազներ չասեք «կուլտուրայի» մասին, —պետական պարտավորեցուցիչ լեզուն հարկադրանքի, դուռով հասկացնել տալու հետ ե կապված: Մենք կարծում ենք, վոր ուռւսական

մեծ ու հզոր լեզուն կարիք չունի
այն բանի, վոր վորյեվե մեկը պար-
տավոր լինի այն գավազանի վախով
ուսումնասիրելու»:

Նույն այդ հարցը ընկ. Լենինը շոշափում է
Շահումյանին ուղղած հետաքրքրական նամա-
կում, վորը չի մտել XIX-րդ հատորի մեջ և
լույս է տեսել Ռ. Կ. Կ. Անդրեևիկայան Յերկ-
րային Կոմիտեյի հրատարակած «Сборник ста-
тей, тезисов докладов и проч. по националь-
ному вопросу»-ի մեջ (Թիֆլիս, 1922 թ. տես
էջ 170—172): Այս նամակի մեջ ընկ. Լենինն
ասում է. —

«Թանկագին բարեկամ: Շատ ուրախացա ձեր
15 նոյեմբեր թվակիր նամակի համար: Դուք պի-
տի իմանաք, վոր իմ վիճակում չափազանց գնահա-
տելի յեն ընկերների կարծիքները Ռուսաստանից,
առանձնապես լուրջ ընկերների և տվյալ հարցով
զբաղվողների: Ուստի և ձեր արագ պատաս-
խանն ինձ առանձնապես հաճելի յեր: Ինքդ քեզ
ավելի պակաս ես կտրված զգում, յերբ այս-
պիսի նամակներ ես ստանում: Անցնում եմ
գործին:

«Է. Դուք կողմնակից եք պետական լեզվին
Ռուսաստանում: «Նա անհրաժեշտ է, նա ունե-
ցել է և կունենա խոշոր պրոգրեսիվ նշանակու-

թյուն»։ Վճռականապես համաձայն չե՛մ։ Այս
մասին յես վաղուց եմ գրել „Правда“-ի մեջ
և դեռյեվս հերքման չեմ հանդիպել։ Ձեր ապա-
ցույցն ինձ բնավ չի համոզում,— ընդհակա-
ռակը։ Ռուս լեզուն պրոգրեսիվ նշանակու-
թյուն եղել է խղճուկ ու յետամնաց ազգերի հա-
մար—սա անվիճելի յե։

«Բայց մի թե՞ դուք չեք տեսնում,
վոր նա ե՛լ ավելի մեծ չափով պրո-
գրեսիվ նշանակու-թյուն կունենա
յեթե չլինե՞ր հարկադրանքը։

«Ի՞նչ է, միթե՞ պետական լեզուն չի նշա-
նակում մի գավազան, վորը ուս լեզվից վա-
նում է այլազգիներին։ Ի՞նչպես չեք ուզում հաս-
կանալ այն հոգեբանությունը, վորն առանձնապես
կարեւոր է ազգային հարցում և վորը ամենա-
փոքր հարկադրանքի դեպքում կապականի,
«կմոռտառի» ու չիք կդարձնի մեծ պետու-
թյունների միասնական լեզվի կենտրոնացման
անվիճելի պրոգրեսիվ նշանակությունը։ Բայց
ավելի կարեւոր է եկոնոմիկան, քան հոգե-
բանությունը. Ռուսաստանում արդեն իսկ կա
կապիտալիստական եկոնոմիկա, վորն անհրա-
ժեշտ է դարձնում ուսերեն լեզուն։ Յեվ դուք
չե՛ք հավատում եկոնոմիկայի զորությանը ու
վոստիկանական տականքի հենակներով եք ուզում

եկոնոմիկան ամբասցնել: Մի՞թե դուք չեք տեսնում, վոր դրանով դուք այլանդակում եք եկոնոմիկան, արգելում նրա ընթացքը: Մի՞թե գարշելի «պոլիցեյշչինայի»⁹⁾ կործանումը չի տասնապատկի (չի հազարապատկի) ուսու լեզվի պահպանության ու տարածման կամավոր միությունները: Վո՛չ, բացարձակապես համաձայն չեմ ձեզ հետ և ձեզ «քյոնիգլիխ-պրայսիշեր սոցիալիզմուսի»¹⁰⁾ մեջ եմ մեղադրում:

6. ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԻ ՊՐՈԼԵՏԱՐԱ-ՀԵՂԱՓՈ-ԽԱԿԱՆ ԴՐՈՒՄԸ

Հետեւելով ընկ. Լենինի արգումենտացիային, մենք տեսնում ենք, վոր ազգային հարցի նկատմամբ իր ունեցած տեսակետի հիմքում Լենինը դնում է յուրաքանչյուր ազգի այլ ազգերի համախմբումներից պետականորեն անջատվելու իրավունքի ճանաչումը, ինքնուրույն, ազգային պետութուն կազմելու իրավունքը. այսու հանդերձ հարցի նման դրոմը Լենինը միակ բանականն է համարում, ամեն բանից առաջ՝ ճնշող ազգերի պրոլետարիատի շահերը նկատի ունենալով:

«Վերցնենք ճնշող ազգի բունած դերը, — ասում է ընկ. Լենինը, — կարո՞ղ է արդյոք այլ

ժողովուրդները ճնշող ժողովուրդը ազատ լինել: Վո՛չ. վելիկորոս բնակչության ազատության շահերը պահանջում են, վոր պայքար մղվի այդպիսի ճնշման դեմ: Ճնշված ազգերի շարժումների ճնշման յերկար, դարավոր պատմությունը «բարձր» դասակարգի կողմից յեղած նման ճնշման սխտեմատիկ պրոպագանդան հենց իր՝ վելիկորոս ժողովրդի նախապաշարումներից ազատվելու գործին խոշոր արգելքներ են հարուցել:

«Վելիկորոսական սեվ-հարյուրակայինները գիտակցաբար պահպանում և հրահրում են այդ նախապաշարումները: Վելիկորոսական բուրժուազիան հաշտվում է նրանց հետ և կամ թե՛ քծնում նրանց առջեւ: Յեթե վելիկորոսական պրոլետարիատը սխտեմատիքաբար չպայքարի այդ նախապաշարումների դեմ, նա չի՝ կարող դեպի ազատութուն տանող իրեն, ճանապարհը հարթել:

«Ինքնուրույն և անկախ ազգային պետութուն ստեղծելը Ռուսաստանում դեռյեվս միայն վելիկորոս ազգի արտոնությունն է մնում: Մենք՝ վելիկորոս պրոլետարներս վո՛չ մի արտոնութուն չենք պաշտպանում, չենք պաշտպանում և՛ այդ արտոնությունը: Մենք կռվում ենք տվյալ պետության հողի վրա, միացնում ենք տվյալ պետության բոլոր ազգերի բանվորներին, ազգային

այս կամ այն ճանապարհի համար մենք յերաշխափորել չենք կարող, բոլոր հնարավոր ճանապարհներով մենք մեր դասակարգային նպատակինքնք դիմում:

«Բայց առանց ամեն տեսակ նացիոնալիզմի դեմ պայքարելու և տարբեր ազգերի հավասարությունը պաշտպանելու չի կարելի այդ նպատակին դիմել: Որինակ, վիճակված և արդյոք Ուկրաինային ինքնուրույն պետություն կազմել — դա կախված է հազարավոր գործողներից, վորոնք նախորդ անհայտ են մեզ: Յեւ վորձ չանելով դատարկ տեղը «գուշակելու», մենք ամուր կանգնած ենք այն բանի վրա, ինչն անկասկած է — Ուկրաինայի իրավունքն՝ այդպիսի պետություն ունենալու: Մենք հարգում ենք այդ իրավունքը, մենք չենք կարող պաշտպանել վելիկորուսի արտոնությունները Ուկրաինացիների նկատմամբ, մենք մասսաներին այդ իրավունքի վագով ենք դատարարակում, պետական արտոնությունների ժխտման վողով, ինչ ազգի յեւ պատկանելի լինեն այդ մասսաները»:

„Звезда“-ի №1-ի մեջ տպված հոդվածում ընկ. Լենինը նորից է անդրադառնում Ռուսաստանի կազմի մեջ մտնող ազգերի ինքնորոշման իրավունքի հարցին և ասում է. —

«Ուկրաինացիների և բելորուսների վերաբեր-

մամբ, որ. միայն յերազներում Մաքսի վրա ազդող մարդը կարող էր ժխտել, թե դրանց մոտ չկա ազգային շարժման ավարտումը, թե մասսաների արթնացումը՝ մայրենի լեզվին և նրա գրականությանը տիրանալու համար (իսկ դա կապիտալիզմի կատարյալ զարգացման, փոխանակության կատարյալ թափանցման, — մինչ վերջին գյուղական ընտանիքը. — անհրաժեշտ պայմանն է) դեռ պիտի կատարվի: Իրանց մոտ «հայրենիքը» դեռ իր պատմական վողջ յերգը լրիվ չի յերգել: «Հայրենիքի պաշտպանությունն» այդտեղ դեռ յեւ գեմոկրատիայի, մայրենի լեզվի, քաղաքական ազատության պաշտպանություն կարող է լինել՝ ընդդեմ ճնշող ազգերի ընդդեմ միջնադարի, վորովհետեւ անգլիացիք, ֆրանսիացիք, գերմանացիք, իտալացիք այժմ ստում են, յերբ իրենց հայրենիքի պաշտպանության մասին են խոսում տվյալ պատերազմի ընթացքում, քանի վոր իրապես իրենք վոչ թե մայրենի լեզուն, վոչ թե իրենց ազգային ազատությունն են պաշտպանում, այլ իրենց ստրկատիրական իրավունքները, իրենց գաղութները, իրենց ֆինանսական կապիտալի ոտար յերկրներում ունենալիք «ազդեցության սփերան» և այլն:

Նույն այդ հոդվածում, սուր կերպով քննադատելով ընկ. Պ. Կիյեվսկու (Յու. Պյատալովի)

հայացքները, ընկ. Լենինը գրում է. —

«Ընկ. Պ. Կիյեվսկու ամբողջ հողվածի միջով կարմիր թելի պես անցնում է այս հիմնական տարակուսանքը — ի՞նչու քարոզ կարգալ է, — յերբ մենք իշխանություն գլուխ կանցնենք, — ազգերի բաժանման ազատությունն իրականացրենք, քանի վոր ամբողջ զարգացումը դեպի ազգերի ձուլումն է գնում: Սակայն ել ինչու յեք քարոզում, կապտասխանենք մենք, և՛ յերբ իշխանություն գլուխ կանցնենք, իրականացնում՝ պրոլետարիատի դիկտատուրան, յերբ ամբողջ զարգացումը դեպի հասարակության մի մասի՝ մյուսի նկատմամբ ունեցած բռնի տիրապետության վոչընչացումն է գնում: Դիկտատուրան հասարակության մի մասի՝ մնացած ամբողջ հասարակության վրա ունեցած տիրապետությունն է, այն ել մի տիրապետություն, վոր անմիջականորեն բռնության վրա յե հենվում: Պրոլետարիատի դիկտատուրան, վորպես միակը մինչ հեղափոխական դասակարգի վախճանը, անհրաժեշտ է բուրժուազիայի տապալման և նրա հակահեղափոխական փորձերը վանելու համար: Պրոլետարիատի դիկտատուրայի հարցն այնպիսի կարեւորություն ունի, վոր ս.-դ. կուսակցության անդամ լինել չի կարող նա, (ընթերցողին հիշեցնում ենք, վոր հողվածը գրված է 1916 թ.,

յերբ մենք բոլորս մեզ սոցիալ-դեմոկրատներ եյինք անվանում) ու ժխտում է այն և կամ միայն բերանացի յե ճանաչում: Բայց չի կարելի բացասել, վոր առանձին դեպքերում իբրեւ բացառություն, որ. վորյեվե փոքրիկ պետություն մեջ, այն բանից հետո, յերբ նրա հարեւան մեծ պետությունը սոցիալական հեղափոխություն է արել, հնարավոր է, վոր բուրժուազիան խաղաղ կերպով զիջի իշխանությունը, յեթե նա կհամոզվի դիմադրության ապարդյուն լինելու մեջ և կգերադասի իր գլուխը վողջ պահել, Խհարկե, ավելի հավանական է, վոր փոքրիկ պետությունների մեջ սոցիալիզմն առանց քաղաքացիական պատերազմի չիրականանա, ինչու և միջազգային սոցիալ-դեմոկրատիայի միակ ծրագիրը պիտի լինի այդպիսի պատերազմի ճանաչումը, թեյեւ մեր իդեալի մեջ մարդկանց վրա բռնության տեղ չկա: Այդ նույն mutatis mutandis-ը¹⁾ (համապատասխան փոփոխություններով) կիրառելի յե ազգերի նկատմամբ: Մենք կողմնակից ենք նրանց միացմանը, բայց այժմ բռնի միացումից ու անեկսիաներից անցումը դեպի կամավոր միացում առանց անջատման ազատության լինել չի կարող»:

«Այս բառերի մեջ, — նկատում է ընկ. Զինովյեվը, — ինքը վողջ Լենինն է յերեւան գալիս,

վորպես 1917—1923 թ. թ. հեղափոխութեան մեծ տարիների քաղաքագետ, վորպես մեր կուսակցութեան առաջնորդը և ուսուցիչն ու նրան ճիշտ ճամբա ցույց տվողը:

Այնինչ՝ 1917 թ. ապրելյան կոնֆերանսին, ցարկզմի տապալումից հետո ընկ. Լենինն ու նրա մերձավոր համախոհները նորից կռիւ բռնակցին ազգային հարցի առթիւ՝ նույն ընկ. Յու. Պլատակովի և մեր բարեկամներից մի քանի այլոց դեմ, վորոնք շարունակում էին տեսական սխալներ անել ազգային հարցում: Յեւ կուսակցութեանը կանգնեց ընկ. Լենինի տեսակետի վրա:

Իր հողվածների մեջ ընկ. Լենինը հաճախ եր անդրադառնում ազգերի ինքնորոշման հարցին: «Ազգերի ինքնորոշման հարցի պրոլետարա—հեղափոխական դրումը» հողվածի մեջ ընկ. Լենինը գրում է (հ. XIX եջ 172).—

«Ճնշող ազգերի պրոլետարիատը չի կարող բավականանալ առաջին պատահած պացիֆիստ բուրժուալի կրկնած ընդհանուր, շարուն ֆրագներով ընդհանրապես դեմ անեկսիաների և թեր՝ ազգերի իրավահավասարութեան: Պրոլետարիատը չի կարող լուծութեամբ անցնել իմպերիալիստական բուրժուազիայի համար առանձնապես անհաճո պետութեան սահմանների հարցի վրայից, մի պետութեան, վոր ազգային ճնշման վրա յե հեն-

վում: Պրոլետարիատը չի կարող չպայքարել տվյալ պետութեան սահմաններում ճնշված ազգերին բռնի կերպով պահելու դեմ, իսկ դա նշանակում է պայքարել ինքնորոշման իրավունքի համար: Պրոլետարիատը պարտավոր է իր ազգի կողմից ճնշված ազգերի և զաղութների քաղաքական անջատման ազատութեանը պահանջելու: Հակառակ դեպքում պրոլետարիատի ինտերնացիոնալիզմը դատարկ և բառային է մնում. ճնշող ու ճնշվող ազգերի բանվորների միջիւ մահնար է վո՛չ վստահութեան, վո՛չ դասակարգային համերաշխութեան. ինքնորոշման բեֆորմիստ կառուցկիական պաշտպանների կեղծավորութեանը—վորոնք լուծում են իրենց «սեփական ազգի» կողմից ճնշվող և զոռով սեփական պետութեան մեջ պահվող ազգերի մասին, — այդ կեղծավորութեանը մնում է չդիմակազրկված վիճակում:

Մի այլ տեղ Լենինը ասում է,—

«Մանր բուրժուաները վախեցած բուրժուազիայի ուրվականից են վախի բռնվում, սա յե ս.դ. մենշեվիկների և ես-երների քաղաքականութեան ուղն ու ծուծը: Նրանք «վախում են» անջատումից: Գիտակից պրոլետարները նրանից անջատում: Յե՛ւ Նորվեգիան և՛ Շվեցիան շա-հեն վախում: Յե՛ւ Նորվեգիան ազատ կերհեցին, յերբ 1905 թվին Նորվեգիան ազատ կերպով անջատվեց Շվեցիայից, շահե՛ց և այդ եր-

կու ազգերի միջեւ յեղած վատահուծութիւնը, շահեց նրանց կամավոր մերձեցումը, չքացան անհեթեթ ընդհարումները, ամբացալ յերկուսի տնտեսական և քաղաքական, կուլտուրական ու կենցաղային փոխադարձ ձգողութիւնը, ամբացալ այդ յերկու յերկրներ յեղբայրական միութիւնը:

«Ընկեր բանւորներ և գյուղացիներ! Մի՛ք տարվի ռուս կապիտալիստներ Գուշկովի, Միլյուկովի, Ժամանակաւոր կառավարութեան անհկասիոնիստական քաղաքականութեամբ՝ Ֆինլանդիայի, Կուրլանդիայի, Ուկրաինայի և այլոց նկատմամբ: Մի՛ք վախի այդ բոլոր ազգերի անջատման ազատութիւնը ճանաչելուց: Բռնութեամբ չե, վոր այլ ժողովուրդներ պետք ե գրավել վելիկորոսների հետ միութիւն կնքելու, այլ միայն իսկական կամավոր, իսկական ազատ համաձայնութեամբ, վորն անհնար ե առանց անջատման ազատութեան:

Ինչքան Ռուսաստանն ավելի ազատ լինի, այնքան վճռական կճանաչի մեր հանրապետութիւնը վո՛չ վելիկորոս ազգերի անջատման ազատութիւնը՝ այնքան ավելի պակաս կլինեն իսկական անջատման դեպքերը, այնքան ավելի կարճ ե այն ժամանակամիջոցը, վորով ազգերից մի քանիսն անջատվում են և վերջին հաշիւով, այն-

քան ավելի սերտ ու ամուր ե ռուսական պրոլետարական-գյուղացիական հանրապետութեան յեղբայրական միութիւնը վորյեւի ալ ազգի հետ»:

7. ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՅԸ ՅԵՎ ԿՈՄԻՆՏԵՐՆԸ

Ընկ. Լենինն ապացուցեց, վոր առանց ազգային հարցի ճիշտ գրման պրոլետարիատին չի հաջողվի ապալել բուրժուազիայի տիրապետութիւնը և սոցիալական հեղափոխութիւնն իրականացնել: Ահա թե ինչպեա ե բնորոշում ընկ. Լենինը ազգային ազատագրական շարժումներին՝ ինչպեա իրլանդականի, նշանակութիւնը համաշխարհային սոցիալական հեղափոխութեան հաղթանակի տեսակետից:

«Ով նման ապստամբութիւնը «պուտշ»¹²⁾ ե անվանում, նա կամ չարագուշն ռեակցիոներ ե, կամ մի դժտրինյոր, վորն անհուսալի կերպով անընդունակ ե սոցիալական հեղափոխութիւնն՝ վորպեա կենդանի յերեվոյթ պատկերացնել:

Մտածել, վոր սոցիալական հեղափոխութիւնը հնարավոր ե առանց մանր ազգերի ապստամբութեան Յեվրոպայում և գաղութներում, առանց մանր բուրժուազիայի մի մասի հեղափոխական բռնկումների, իր բոլոր նախապաշարումներով հան-

դերձ, առանց անգիտակից պրոլետար և կիսապրոլետար մասսաների շարժումների՝ ուղղված կալվածատիրական, յեկեղեցական, միապետական, ազգային և այլ ճնշումների դեմ,—մտածել այսպես՝ նշանակում է ձեռք քաշել սոցիալական հեղափոխությունից: Կարծես թե այսինչ զորքը կարգ կբռնի այսինչ տեղը ու կասի—«մենք կողմնակից ենք սոցիալիզմին», իսկ մի այլ տեղ՝ մեկ ուրիշը կասի,—«մենք կողմնակից ենք —իմպերիալիզմին»,—և դա կլինի սոցիալական հեղափոխություն: Միայն նման պեղանա և ծիծաղելի տեսակետից հնարավոր եր իրանդական ապստամբությունը հայհոյել, նրան «պուտշ» անուն տալով:

«Ով «անարատ» սոցիալական հեղափոխություն է սպասում, նա յերբեք այն չի տեսնի: Նա խոսքով է հեղափոխական և իսկական հեղափոխությունը չի ըմբռնում,

“Звезда”-ի առաջին գրքույկի մեջ տպված հոդվածի մեջ ընկ. Լենինը կրկնում է.—

«Մինչեւ վոր առաջավոր յերկրների պրոլետարիատը կտապալի բուրժուազիան և կվանի նրա հակա-հեղափոխական փորձերը, չզարգացած և ճնշված ազգերը չեն սպասի, չեն դադարի ապրելուց, չեն անհետանա: Յեթե նրանք ապստամբությունների համար (զաղուլթները, Իրանդիան)

ոգտվում են սոցիալական հեղափոխություն հետ համեմատած բոլորովին փոքրիկ մի կրիզիսով, իմպերիալիստական բուրժուազիայի կրիզիսով, ինչպիսին է 1915—1916 թ. պատերազմը, ապա կասկած չկա, վոր առաջավոր յերկրներում լինելիք քաղաքացիական պատերազմի մեծ կրիզիսից նրանք կոգտվեն ապստամբություն համար առավել մեծ չափով:

«Սոցիալական հեղափոխությունն այլ կերպ չի կարող առաջանալ, քան յեթե իբրեւ մի եպոխա, վոր միացնում է պրոլետարիատի քաղաքացիական պատերազմը բուրժուազիայի հետ առաջավոր յերկրներում և դեմոկրատական ու հեղափոխական (այդ թվում և՛ ազգային-ազատագրական) շարժումների մի ամբողջ շարք՝ անզարգացած, յետամնաց ու ճնշված յերկրներում:

«Այս սակավ տողերի մեջ,—ծիշտ է մատնանշել ընկ. Զինովյեվը,—կոմինտերնի ազգային հարցում ունեցած հեղափոխական-մարքսիստական տակտիկայի ամբողջ ալգերբան է պարփակված: Վ. Ի. Լենինի այս բառերի վրա լրջորեն պիտի մտածեն կոմկուսի այնպիսի յերկրների աշխատողները, ինչպես Անգլիայի, Ֆրանսիայի, Ամերիկայի, Յապոնիայի, ընդհանրապես այն յերկրների, վորոնց բուրժուազիան ճնշում է ոտար ազգերին և թալանում է գաղութներն ու կիսա-

գաղութները:

Այս տեսակետն ազգային հարցի պրոլետարահեղափոխական նախապատրաստության նըշանակության մասին համաշխարհային սոցիալական հեղափոխության հաղթանակի գործում՝ III Խտերնացիոնալի II կոնգրեսում գաղութային և ազգային հարցերի վերաբերմամբ ընդունված հուշակավոր թեզիսների հիմքումն է ընկած:

Այս կոնգրեսին առաջադրված ամենակարեւոր հարցերից մեկը Կոմունիստական Խտերնացիոնալի և կապիտալիստական յերկրների լծի տակ գտնվող քաղաքականապես ճնշված յերկրների հեղափոխական շարժման (Զինատան, Հնդկաստան, Կորեյա, մասամբ Ճաճկաստան, Պարսկաստան, Սիրամ և այլն) փոխհարաբերությունների ճշգրիտ վորոշումն էր: II Կոնգրեսն ընդունեց, վոր յեւրոպական կապիտալիզմը իր ուժերը վերցնում է վոչ այնքան արդյունադործական յեւրոպական յերկրներից, վորքան իր գաղութներից, վոր գաղութներից ստացվող գերշահր ժամանակակից կապիտալիզմի միջոցների գլխավոր աղբյուրն է կազմում, վոր Կոմունիստական Խտերնացիոնալը սերտ համերաշխության մեջ պիտի գտնվի հեղափոխական ուժերի հետ, վորոնք ներկա մոմենտին մասնակցություն ունեն քաղաքականապես և տնտեսապես

ճնշված յերկրների իմպերիալիզմի տապալման գործում:

Գաղութային և ազգային հարցերին վերաբերող ընկ. Լենինի թեզիսների այդ հիմնական գաղափարները, վորոնք Կոմինտերնի՝ Արեւելքում վարած վողջ քաղաքականության հիմքում եյլն ընկած, մինչ համաշխարհային պատերազմը նկատի եյլն առնված ընկ. Լենինի կողմից, յերբ նա գրում էր՝ «Ասիայի զարթնացումը և իշխանության համար առաջավոր պրոլետարիատի մըղած պայքարի սկիզբը ազգանիշում է XX-րդ դարի շեմքին բացվող համաշխարհային պատմության նոր շրջանը»:

Գաղութային և ազգային հարցերի վերաբերմամբ III Խտերնացիոնալի II կոնգրեսում ընդունված ընկ. Լենինի թեզիսներից ամենակարեւոր և հիմնական իդեան է ճնշված ու ճնշող ազգերի զանազանությունը: «Մենք,—ասում է ընկ. Լենինը,—հակառակ II Խտերնացիոնալին և բուրժուական դեմոկրատիային, ընդգծում ենք այս զանազանությունը: Պրոլետարիատի և Կոմունիստական Խտերնացիոնալի համար առանձնապես կարեւոր է կոնկրետ, տնտեսական փաստերի հաստատումը, և գաղութային ու ազգային բոլոր հարցերը լուծելիս չեթե վերացական վիճակներից պետք է յեղնել, այլ կոնկրետ

իրականության յերեվոյթներից:

Բուրժուական դեմոկրատիային հենց իր խառնվածքի համաձայն հատուկ է հավասարության հարցի ձեւական և վերացական դրումն ընդհանրապես, այդ թվում՝ և ազգային հավասարության հարցի դրումը:

«Իմպերիալիզմի բնորոշ գիծն այն է, վոր այժմ ամբողջ աշխարհը բաժանվում է մեծ թվով ճնշված, վո՛չ անկախ և վո՛չ իրավահավասարագոր ժողովուրդների և՛ թվով աննշան ճնշող ժողովուրդների, վորոնք հսկայական հարստություններ ու զորեղ զինվորական ուժ ունեն:

«Բուրժուական դեմոկրատիան իրեն առանձնահատուկ մի կեղծավորությամբ մթափում է իմպերիալիզմի եպոխային հատուկ յերկրագնդի բնակչության խոշոր մեծամասնության գաղութային և ֆինանսական ստրկացումը առաջավոր կապիտալիստական յերկրների չնչին փոքրամասնության կողմից»:

«Բառասուն տարի սրանից առաջ,—ասում է ընկ. Լենինը,—գաղութների բնակչությունը մի քառորդ միլիարդից մի քիչ ավել էր հաշվում, վորը հպատակված էր կապիտալիստական վեց պետությունների: 1914 թ. պատերազմից առաջ, գաղութներում արդեն մոտ 600 միլիոն ժողովուրդ էր հաշվվում, և յեթե ավելացնելու

լինենք այնպիսի յերկրներ, ինչպես Պարսկաստանը, Տաճկաստանն ու Չինաստանն, վորոնք այն ժամանակ արդեն իսկ կիսագաղութային վիճակումն էյին, ապա մենք կլոր թվերով կստանանք մի միլիարդ բնակչություն, վորը գաղութային կախման վիճակով ճնշված էր ամենահարուստ, ամենաքաղաքակիրթ և ամենաազատ յերկրների կողմից:

1914—1918 թ. թ. համաշխարհային պատերազմն այն բանի համար էր վարվում, վոր ամբողջ աշխարհը վերաբաժանվի, վարվում էր նրա համար, թե ամենախոշոր պետություններից վո՛ր չնչին խումբը՝ անգլիական, թե գերմանական—հնարավորություն և վրավունք կըստանա ամբողջ աշխարհը թալանելու, խեղդելու և շահագործելու: Պատերազմն այս հարցը լուծեց հոգուտ անգլիական խմբակցության:

«Մինչ պատերազմը, ինչպես ձեւակերպել է ընկ. Չինովյեվն իր «Պատերազմն ու սոցիալիզմի կրիզիսը» գրքում (մասն 2) իմպերիալիստական 6 մեծ պետությունները՝ 437 միլիոն բնակչությամբ, ճնշում էյին 933 միլիոն բնակչություն ունեցող գաղութներն ու կիսագաղութները: Պատերազմի հետեւանքով հաղթող պետությունները մի քառորդ միլիոն բնակչությամբ, այսինքն՝ յերկու անգամ պա-

կապ քանակով, արդեն շահագործում են մեծ
 թվով մարդիկ, այն ե՛ւ մեկ ու մի քառորդ մի-
 լիարդ բնակչությունն այն յերկրներն, վորոնցից
 մի քանիսը առաջուց ել գաղութներ կամ կիսա-
 գաղութներ եյին, իսկ մյուսները վերջիններն
 դրության մեջն ընկան համաշխարհային պատե-
 րազմի հետեւանքով: Տնտեսական այս նոր պատ-
 կերի հետեւանքն ե հանդիսանում կապիտալիս-
 տական բոլոր հակասությունների հետագա սրը-
 վելը: Մի կողմից մասսաների ու նախ և առաջ
 հին գաղութների ու պարտված պետություննե-
 րի մեկ և մի քառորդ մարդկանց, այսինքն՝ յեր-
 կրագնդի 70% ազգաբնակչության կարիքը, քայ-
 քայվածությունը անլսելի կերպով աճեցին և մյուս
 կողմից՝ յուրաքանչյուր հաղթող յերկրի ներսում
 զարգացան ավելի սուր հակասություններ, բոլոր
 կապիտալիստական հակասություններն ավելի
 յեվս սրվեցին: Անգլիայում, Ֆրանսիայում, Ամե-
 րիկայում կյանքը որ որի վրա թանկանում ե,
 աշխատանքի արտադրականությունն ընկնում ե,
 փողն իր արժեքն ե կորցնում, պետական պարտ-
 քերը վոչ թե որով, այլ ժամով են աճում, ժո-
 դովրդական մասսաները քանի գնում ավելի ու
 ավելի խորն են ընկնում չքավորության անդուն-
 դի և վերջնական քայքայման մեջ: Յեվ սրա մեջն
 ե գտնվում—ինչպես ասում ե ընկ. Լենինը,—

այն խորագուն հեղափոխական խմորման աղ-
 բյուրը, վորը ծավալվում ե ամբողջ Յեվրոպայում
 և մինչեւ իսկ հաղթող յերկրներում, ինչպե-
 ուրինակ Անգլիայում, վորի բանվոր դասակար-
 զը ռուսականից հետո՝ բանվորական շարժման
 առաջապահ դերի մեջ ե:

Այս բանն զգալի չափով թեթեւացնում ե
 Արեւելքի ժողովուրդների պայքարը՝ մղված ի-
 րենց ազատության համար: XX-րդ դարի Արե-
 վելքն այլեւս այն չի, ինչպիսին եր նախ՝ XIX-րդ
 դարում: XX-րդ դարը հեղափոխական վոգու ար-
 թընացումն ե ասիական յերկրներում: Պայքարի
 առաջին ազգանշանն ընդդեմ հին աշխարհի, ընդ-
 դեմ կապիտալիստական կարգերի Ռուսաստանը
 բարձրացրեց 1905 թվին, Ռուսաստանն ինքը
 կիսասիական յերկիր ե ու տառապել ե ցարա-
 կան լծի տակ, իր հայրենական բուրժուազիայի
 և միջազգային ոտարյերկրյա կապիտալի շահա-
 գործումից: Զե վոր մինչ պատերազմը Ռուսաս-
 տանն արդեն անգլո-ֆրանս-բելգիական կապի-
 տալի կես գաղութն եր: Մեր ածխահորերը, մեր
 մետաղագործական ձեռնարկությունները, մեր
 ելեքտրո-տեխնիքական արդյունագործությունը,
 մեր տրամվայները,— այս բոլորն ոտարյերկրյա
 տրեստների ձեռքումն եր գտնվում: Մեր ցարիզ-
 մը, մեր ամբողջ ռազմա-վոստիկական սիս-

տեմը արտասահմանյան կապիտալներով եր պահպանվում և ամենից առաջ՝ ֆրանսիական բիրժայի միջոցով, վորը Ռոմանովներին տաբեկան մոտ 12 միլիարդ ֆրանկ փոխառություն եր առնում՝ գահերի և հին կարգերի պաշտպանության համար:

Շատերը սնդում եյին, վոր իբր թե արեւելեյան յերկրներին պարտավորեցուցիչ ե, վոր նրանք անցնեն ժողովրդական տնտեսության զարգացման կապիտալիստական շրջանով: Այլ բնատեղնացիներն ընդունում ե, վոր յետամնաց ժողովուրդները՝ առաջավոր յերկրների պրոլետարիատի ոգնությամբ կարող են խորհրդային կարգերի անցնել, և վորոշ աստիճանների միջոցով՝ կոմունիզմին, մի կողմ թողնելով զարգացման կապիտալիստական շրջանը:

Վողջ Արեւելքը հագեցած ե հեղափոխության բակտերիաներով: Արեւելեյան յերկրների բազմամիլիոն, բազմատանջ մասսաները դարավոր բռնության դեմ բողոքի վոգով են բռնկված, վրեժի ու պայքարի ծարավով են վառված: Յեթե մենք հեղափոխության տարրերով հագեցած այս թանձր լուծույթի մեջ մի բյուրեղ մացրնենք՝ գյուղական խորհուրդների, աշխատավորների խորհուրդների ձեւով, — համապատասխան բյուրեղացումն կերթա արագ քայլերով, և նոր

սոցիալական կարգերի համար մղվող պայքարում զգալիորեն առաջ կմղենք Արեւելքի ժողովրդական մասսաների հեղափոխական դատարակման ու հեղափոխական կազմակերպության գործը:

Խորհրդային կազմակերպության իդեան սակայն, — ինչպես ընկ. Լենինն եր ապացուցում III Խնտերնացիոնալի II-րդ կոնգրեսին, — պարզ ե, վոր կարող ե կիրառվել վոչ միայն պրոլետարական, այլեւ գյուղացիական, ֆեոդալական և կիսաֆեոդալ հարաբերությունների նկատմամբ: Գյուղացիական խորհուրդները, աշխատավորների խորհուրդները մի միջոց են, վոր պետք կդան վոչ միայն կապիտալիստական յերկրների համար, այլեւ մինչ կապիտալիստական հարաբերություններն ունեցող յերկրների համար: Այս պատճառով կոմունիստական կուսակցությունների և նրանց հարող տարրերի անպայման պարտականությունն ե ամենուրեք՝ յետամնաց յերկրներում, գաղութներում գյուղացիական խորհուրդների և աշխատավորների խորհուրդների իդեայի պրոպագանդը մղել:

Աշխատավորների խորհուրդների կազմակերպումը կդյուրացնի արեւելեյան ժողովուրդների պայքարը, վոր մղում են նրանք ազատագրվելու ներքին և արտաքին թշնամիներից,

աղատագրվելու Ֆրանսիայի, Յապոնիայի, Ամերիկայի և առանձնապես Անգլիայի,—վորը դաժան ստրկութեան մեջ ե պահում հարյուր միլիոնավոր մարդիկ,—ճնշումից:

Մենք գիտենք, վոր յեվրոպական կապիտալիզմն իր ուժը վերցնում ե գլխավորապես վո՛չ թե յեվրոպական արդյունադործական յերկրներից, այլ իր գաղութներից: Մեծ Բրիտանիայի զորեղ արդյունադործական որգանիզմը, նրա անսահման գաղութների շահագործման վրա յե հենվում:

Խլեցեք այս վերջիններն Անգլիայից և դուք մեծն բրիտանական կապիտալիզմի և իմպերիալիզմի վողնաշարը կշարդեք:

Ինչպես ընկ. Ջինովյեմն ապացուցեց «Պատերազմը և սոցիալիզմի կրիզիսը», իր գրքում՝ պատերազմի նախորդակին այնպիսի յերկրներում, ինչպես Անգլիան ե, մայր յերկրի հարյուր բընակիչներին գաղութների բնակիչներից 850 հոգի յեր գալիս: Պարզ լեզվով վոր ասելու լինենք, դա կնշանակի, յեթե մայր յերկրի հարյուր բընակիչներից խոշոր կապիտալի, ասենք 50%-ը շահագործում ե մնացած 95%-ին, նույն այդ 50%-ը բացի դրանից այս կամ այն յեղանակով շահագործում եր գաղութների բնակչութեան մի խոշոր քանակ: Անգլիական խոշոր կապիտալիս-

տներից յուրաքանչյուր 5 մարդու համար աշխատում են վոչ միայն մայր յերկրում ապրող 95 հոգի անգլիացիներ, այլ նորից 850 մարդ, վորոնք բնակվում են Հնդկաստանում, Կանադայում, Յեպիպտոսում:

Հիմա, համաշխարհային պատերազմի հետևանքով, անգլիական ամեն մի կապիտալիստին հասանելի գաղութային ստրուկների թիվն ավելի յե աճել:

Առանց այլեւայլ դատողութիւնների այս թվերը ցույց են տալիս գաղութների ամբողջ նշանակութիւնը կապիտալիզմի համար:

Գաղութների անշատումը մայր յերկրից մահացու հարված կհասցնի կապիտալիզմին, կկոտրի վերջինիս վողնաշարը:

Ահա թե ինչու այնպիսի խոշոր հեղափոխական նշանակութիւն ունի Քեմալի Տաճկաստանի հաղթութիւնն անգլիական իմպերիալիզմի դեմ: Այս հաղթութեան նշանակութիւնն այն արձագանքով ե խորանում, վորպիսին նա գրանում ե կոնստինստի դեղին և սեւ բոլոր ճնշված յերկրներում,—Հնդկաստանում, Պարսկաստանում, Սյուրիայում, Աֆղանիստանում, Յեպիպտոսում, Մարոկկոյում, Թունիսում, Ալժիրում և այլն: Որչեւիտիվորեն Քեմալի Տաճկաստանը սվայլ մոմենտում հեղափոխական ամենամեծ լծակի

դեր ե կատարում—կապիտալիստական ամբողջ կարգերը հոգս ցնդելու և խորտակելու համար: Մի անգամ վոր սկսել ե, ազգային հեղափոխական շարժումն ամբողջ Արեւելքում չի կարող այնպես վերջանալ, ինչպես Ֆրանսիական Մեծ Հեղափոխութիւնը վերջացավ, այսինքն՝ կալվածատերերի իշխանութիւնն տապալումով, նրան փոխարինելով բուրժուազիայի յերկարատեւ տիրապետութեամբ:

Պատմական այն մոմենտը, համաշխարհային վողջ կոնյունկտուրան, վորի պայմաններում զարգանում ե ազգային ազատագրական մի զորեղ շարժում—ընդհանուր և վոչինչ չունի միջազգային դրութեան հետ Ֆրանսիական Մեծ Հեղափոխութեան եպոխայում:

Հիմա մենք ներկա յենք կապիտալիզմի փլուզումին ամբողջ աշխարհում և պրոլետարիատի, իբրեւի՝ խորտակվող կարգերի գերեզմանափորի՝ կալվածկերպութեան ու կարողութեան արագ զարգանալուն: Ահա թե ինչու Գեմալի և տաճկական ազգային շարժման այլ հաղթական առաջնորդների ցանկութիւնից անկախ հեղափոխութիւնը Տաճկաստանում և վողջ Արեւելքում չի գնա հին, հարթված ճանապարհով՝ դեպի բուրժուազիայի տիրապետութեան հաստատվելը, այլ կընթանա միլիոնավոր բանվորների և գյուղա-

ցիներին ձգտման ուղիով դեպի իշխանութիւնն նւաճելը նայել ճնշված, կիսագաղութային յերկրներում: «Միլիոնավոր և հարյուր միլիոնավոր մարդիկ, փաստորեն յերկրագնդի բնակչութեան մեծամասնութիւնը, հանդես են գալիս՝ վորպես ինքնուրույն ակտիւ հեղափոխական գործոններ» —ասում ե Լենինը III Կոնգրեսում՝ գաղութային և կիսագաղութային յերկրների զորեղ շարժման մասին:

ՎՐԻՊԱԿՆԵՐ

Ե.Ձ	ՏՈՂ.	ՏՊՎԱՅ Ե	ՊԵՏՔ Ե ԼԻՆԻ
50	8.	պրայսիշեր,	պրայսիշեր:
55	17.	մարդկանց վրա բռնութեան տեղ չկա.	մարդկանց վրա բռնաւոր տեղ չունի:

Тип. Госиздата СССР Армении, Москва, Арм. пер. № 2,

Главлит № 26071.

Тир. 1000.



ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 1) Ն. Կ. ՄԻՆԱՑԻՆՍԿԻՆ.—*ռուս «նարոդնիկության» ակա-*
նավոր տեսաբանն է. նա իդեալացնում էր գյուղացիական «աշխա-
տավորական» անտեսությունը, հակադրելով այն բուրժուականին.
90-ական թվականներից կատաղի պայքար է վարում մարքսիզմի
դեմ, վորի համար յենթարկվում է Գ. Վ. Պլեխանովի ջախջախիչ
քննադատությունը:
- 2) Ս. ՅՈՒԺԱԿՈՎԸ.—*նարոդնիկական ուղղության կողմնա-*
կից հրապարակախոս է. յեղել է «Русское богатство» ամսագրի
խմբագիրներից մեկը:
- 3) Ս. ԿՐԻՎՆՆԿՈՆ.—*նարոդնիկ հրապարակախոս է. «Русское*
богатство» և այլ նարոդնիկական պարբերականների աշխատակից.
պայքարել է ռուս մարքսիստների դեմ. յենթարկվել է սուր քն-
նադատության Ն. Լենինի և Գ. Վ. Պլեխանովի կողմից:
- 4) ՆԻԿՈՒՍ-ՈՆ.—*կեղծ անունն է Ն. Ֆ. Դանիլյուսովի՝ 80-*
90-ական թվականների անտեսագետի և հրապարակախոսի. նարո-
դնիկության ամենացայտուն ներկայացուցիչներից մեկն է և Կ. Մարք-
սի «Կապիտալի» 1-ին հատորի առաջին թարգմանիչը ռուս լեզվով:
- 5) «РУССКОЕ БОГАТСТВО» հանդեսը հիմնել է Լ. Որո
լենսկին. 90-ական թվականների սկզբին նա անցավ նարոդնիկների
ձեռքը և դարձավ մարքսիզմի դեմ պայքարող գլխավոր օրգաններից
մեկը:
- 6) ԲՈՅՄՐՆԵՐԸ ռուս. իշխաններ, ազնվականներ:
- 7) ՊՈՒՐԻՇԿԻՆԸ ռուսական միապետության ջերմ պաշտ-
պաններից մեկն էր Պետական միապետության ջերմ պաշտ-
պաններից մեկն էր Պետական Դումայում և Ռուս ժողովրդի մի-
ությունն անուն կրող միապետական կազմակերպության ղեկա-
վարը Բաղադրացիական կոնիների ընթացքում զանվում էր Դենի-
կինի բանակում, Հյուսիսային Կովկասում, ուր և մեռավ 1920 թ.
- 8) «ПОБУДКИ» թերթը լեհ սոցիալ-ազգայնականների օր-
գանն էր:
- 9) «ՊՈԼԻՑԵՑՉԻՆԱ».—*ռուսերեն նշանակում է «այնպիսի*
իրավակարգ, ուր իշխում են վոստիկանական հալածանքները և
ճնշումները. վոստիկանական պետություն:
- 10) «ԲՅՈՆԻԳԼԻՆ ՊՐՈՅՍԻՇԵՐ ՍՈՑԻԱԼԻԶՄՈՒՄ».—*գերմա-*
ներեն նշանակում է «պրոլետարիատական սոցիալիզմ»:
- 11) MUTATIS MUTANDIS. լատինական դարձվածք.
նշանակում է՝ համապատասխան փոփոխություններով:
- 12) ՊՈՒՏՇ.—*չնչին ժողովրդական հուզում:*

«Ազգային գրադարան



NL0172822

1p.

4h. p